Ե. ՏԱՐԻ 1483 ԹՎ՝ ՀԱՅՈՑ 4380 ԲԱՂԻՑ 4 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1888 (Ն. Տ.) 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1888 20 ՐԷՊԻՒԼ ԱԽԸՐ 1306

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌ولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան գանձեան արծաթ	16
» » Վեց ամսեայ » »	80
» » Երեք ամսեայ » »	40
Գաւառաց » Տարեկան » »	200
» » Վեցամսեայ » »	100
Օտար երկիրներէ տարեկան ֆրանք	56
» » վեցամսեայ »	28

Դուրս ղրկուած լրագրոց ճամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1888

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ո՞ՐՆ Է ՍՏԻՊՈՂԱԳՈՅՆ

Մեր դեկտ. 3ի շաբաթ աւուր յօդուածով խօսած էինք Սկիւտարի Ճեմարանին վերաշինութեան նկատմամբ։ Շատ ուրախ ենք լսելով թէ այս վերաշինութիւն ընդհանրապէս կարծուածէն աւելի յուսալից կ'երեւի։ Կ'արժէ արդարեւ որ կրթական հաստատութիւն մը, որ այնպիսի անուն մը և այնպիսի պատմութիւն մ'ունի, վերականգնի իւր աճիւններէն, և դարձեալ արդիւնաւոր հաստատութիւն մը դառնայ։

Բայց մեր լրագիրը կարդացող Խասգիւղցի կրթասէր բարեկամ մը պէտք մը զգացած է այդ յօդուածին առթիւ դիտողութիւն մ'ուղղել մեզ, զոր արժան կը համարինք մեր ընթերցողաց դատաստանին յանձնել։

«Ձեր շաբաթ աւուր յօդուածը («Ճեմարանն և Երուսաղէմի վանքն») ինծ դիտողութիւն մը կը թելադրէ, զոր կը յուսամ թէ կը հիւրընկալէք ձեր էջերուն մէջ։ Գոհութեամբ կ'աւետէք թէ կրթասէր բարերարաց ոմանց քով բարեյօժար տրամադրութիւններ կ'երեւին վերաշինելու Սկիւտարի Ճեմարանը։ Բայց այդ հրկիզեալ վարժարանին վերաշինութեան խնդիրն այնչափ առջեւ կը բերէ ուրիշ վարժարանի մը վերաշինութեան խնդիրն, որ թէեւ բարեբախտաբար, — կամ դժբախտաբար, — հրկիզեալ չէ, բայց աւերակէ մը մեծ տարբերութիւն չունի. Խասգիւղի Ներսիսեան Վարժարանն, որ Սկիւտարի սակաւօրեայ Ճեմարանին հետ բաղդատմամբ անշուշտ շատ աւելի արդիւնաւոր եղած է, իւր նիւթական ու բարոյական շէնքով աւերակէ մը տարբերութիւն չունի այսօր, շէնքն ա՛յնչափ խախուտ և քայքայուն է, որ ամեն օր անոր մէջ ժողվուելու դատապարտեալ քանի մը հարիւր մանկտւոյն կեանքն ակներեւ վտանգի մէջ է։ Կարդացի լրագրոյ մէջ թէ այս տարի ձմեռը սաստիկ պիտի լինի եղեր. այսինքն՝ ձիւն շատ պիտի գայ։ Ահա՛ այդ ձիւնը պիտի լինի գուցէ վերջին բեռն որոյ ներքեւ պիտի ընկճի Ներսիսեան Վարժարանն։ Անցեալ ձմեռ չզարմացանք լսելով թէ շատ մը ծնողք քանի մը օրեր չեն համարձակած իրենց տղայքը Ներսիսեան Վարժարանը ղրկել, — ո՛չ թէ այն պատճառաւ որ դասատուները քանի մը ամսական առնելիք ունենալով և բան չկրնալով ստանալ դժգոհ էին և դասերն անկարգ, — այլ և առաւել նիւթական սա՛ պատճառաւ թէ կը վախնային որ տեղացած ձեան կոյտին ներքեւ դպրոցին շէնքը չփլչի։ Բազմաթիւ յենարաններն ու յաւելուածական գերաններն որք պաշտօն ունին այս խախուտ շէնքին ճարճատող կտորները քով քովի բռնելու, ա՛յնչափ անգոհացուցիչ կերպիւ կը կատարեն իրենց ապերախտ և դժնդակ պաշտօնն, որ կը վախցուի թէ անոնք եւս ի մօտոյ հրաժարական պիտի տան՝ յուսահատ և հիւծեալ դասատուներուն պէս, և յանձամ նիւթական աւերակը պիտի հաւասարի բարոյական աւերակին, և փոխադարձաբար։

«Կրթական և ճարտարապետական այս կարի ցաւալի պարագայից մէջ, կը հարցունեմ ինքնիրենս թէ «Ո՞րն է ստիպողագոյն», Սկիւտարի Ճեմարանի՞ն թէ Խասգիւղի Ներսիսեան Վարժարանին վերաշինութիւնը։

«Կրթական տեսակէտով Սկիւտար՝ ուրիշ շատ մը թաղերու հետ բաղդատմամբ՝ իրօք նախանձելի վիճակ մ'ունի այսօր։ Թէպէտ Ճեմարանն, այսինքն Ենի-Մահալլէի թաղային վարժարանը, զոհ գնաց 1887 օգոստ. 2ի հրդեհին, բայց տակաւին Սկիւտար ունի թաղային վարժարան մը ի Սելամսըզ, և կը պարծի Պէրպէրեան և Մէզպուրեան Վարժարաններով։ Սկիւտարցի հայք, հարուստ թէ աղքատ, իրենց մանչ և աղջիկ զաւակունքը կրթելու համար ամեն դիւրութիւն ունին իրենց գիւղին մէջ իսկ։ Ճեմարանի աւերակներուն վրայ ողբացող 200 տնւոր Ենի Մահալլէցիք կրնան իրենց դառն սգոյն մէջ քիչ շատ մխիթարութիւն գտնել՝ իրենց զաւակները ղրկելով հինգ վայրկեան հեռի Ս. Խաչի դպրոցը, կամ մօտակայ Պէրպէրեան կամ Մէզպուրեան Վարժարանն, իրենց նիւթակա՛ն կարողութեան համեմատ։ Այս տեղափոխութենէ իրենց զաւակաց կրթութիւնը բնաւ չի վնասուիր, այլ թերեւս ալ կ'օգտի, զի գիտէք թէ Ճեմարան կոչուած թաղային վարժարանը վերջին ժամանակներս հեռի էր նիւթական ու բարոյական նպաստաւոր պայմանաց մէջ գտնուելէ։

«Իսկ Խասգիւղցի՞ն ինչ ընէ։ Բովանդակ Խասգիւղի մէկ ծայրէն միւսը 6—700 տնւոր Խասգիւղցիք մէ՛կ թաղային վարժարան միայն ունին, Ներսիսեան Վարժարանն։ Հարուստ—եթէ երբեք կան ի Խասգիւղ—և աղքատք իրենց զաւակաց կրթութեան համար մէ՛կ դպրոց միայն ունին Խասգիւղի մէջ։ Պէրպէրեան մը, Մէզպուրեան մը չկայ Խասգիւղի մէջ, որպէս զի մարդ քիչ մը աւելի թոշակ վճարելն աչք առնլով իւր զաւակն հոն ղրկէ։ Ներսիսեան Վարժարանէն զատ Խասգեղցին ունի միայն Բողոքականաց նախակրթարան մը և Հրէից երկու մեծ դպրոցները, մին Քամօնտօ կոմսին և միւսը Պառօն Հիրշի բարեգործութեան հրաշակերտք։ Եւ Խասգեղցւոյն այդ միակ թաղային վարժարանն ալ՝ ինչպէս ըսի՝ ա՛յնչափ խախուտ է որ մեր զաւակաց բնակութեան գլխովին անյարմար է։ Տարիներէ ի վեր, դեկտեմբեր ամսոյ ցրտին պէս զգալի եղած է Ներսիսեան Վարժարանին վերաշինութեան պէտքը։ Բայց Խասգիւղի Հայութիւնն Սկիւտարի Հայութենէն շատ աւելի աղքատ է, և եթէ Սկիւտարցին իւր Եկեղեցին նորոգելու և իւր հրկիզեալ թաղային վարժարանը վերաշինելու համար արտաքին բարերարներու կը կարօտի, ակներեւ է թէ Խասգեղցիք՝ իրենք իրենց միջոցով՝ չպիտի կրնան վերաշինել իրենց վարժարանն, այն կարի հաւանական պարագային մէջ իսկ երբ իրենց խեղճ զաւակունք Ներսիսեան Վարժարանի փլատակաց ներքեւ թաղուին։

«Ո՞րն է ուրեմն ստիպողագոյն։ Ձեր դատողութեան, մանաւանդ ձեր խղճի՛ն կը յանձնեմ։ Սկիւտարի մէջ հայկական հինգերորդ վարժարան մը շինելէն առաջ պէտք չէ՞ Խասգիւղի միակ վարժարանը շինել։ Զո՞րծեր միթէ որ բարերար մը ելնէ Խասգիւղի համար ընէ ինչ որ Ցակոբեան հարազատք ըրին Սամաթիոյ համար և ինչ որ Ունճեան հարազատք ըրին Սկիւտարի համար։ Այսպիսի օգնութեան մը բնաւ իրաւունք մը չունի՞ Խասգիւղ, որ թէպէտ այսօր աղքատ և անկեալ, բայց իւր բարոյական ու նիւթական մեծութեան օրերն ունեցած է, և այն երջանիկ աւուրց մէջ ընտիր ընտիր զաւակներ ընծայած է Ազգին, և փառաւոր մ'եղած է Կ. Պոլսոյ Հայութեան լուսաւորութեան եւ ազգային յառաջդիմութեան։ Եթէ ոչ ի սէր իւր փառաւոր անցելոյն, գէթ ի մխիթարութիւն իւր այժմու խեղճութեան, Խասգիւղ չի՞ կրնար միթէ շարժել բարերարի մը սիրտը, — բարերարի մը, կ'ըսեմ, որ Նախաձեռնարկ լինի Ներսիսեան Վարժարանի վերաշինութեան, ինչպէս եղան Ցակոբեան եղբարք Սամաթիոյ եկեղեցւոյն վերաշինութեան։ Այնպիսի բարերարի մը սկզբնական նուէրին վրայ բարդուելով Խասգեղցւոց համեստ լումայն կրնայ նշանակութիւն մ'ունենալ, և իրաւցնէ զգալի պէտք մը կ'ընդունի այսչափ տարիներէ հետէ զլացեալ գոհացումն։

«Անգամ մը նիւթական շէնքը կառուցանելէ յետոյ, աշխատութեամբ, խնայութեամբ և բարեկարգ ուղղութեամբ կարելի է բարոյական ո՛չ նուազ անկեալ շէնքն եւս վերականգնել։ Բարեյօժար հոգիներ անպակաս են Խասգիւղի մէջ. բայց Կ. Պոլսոյ թերեւս ո՛չ մէկ թաղ Խասգիւղի չափ աղքատ է, և այս պատճառաւ բարերարի ձեռքի մը օժանդակութեան ամենէն աւելի կարօտ է Խասգիւղ։»

Այս դիտողութիւնները մեր էջերուն մէջ հիւրընկալելու և անոնց վրայ ուշադրութիւն հրաւիրելու մեր կողմէ առարկութիւն մը չունինք ընելու։ Դիտողագիրը մերկ ճշմարտութիւնն իսկ կը յայտնէ՝ Խասգիւղի վարժարանին ողբալի վիճակը ներկայացնելով։ Մեզ անկ չէ վճռել թէ ո՞րն է ստիպողագոյն, Ճեմարանի՞ն թէ Ներսիսեան վարժարանին վերաշինութիւնն։ Երկուքն ալ պիտանի են, և եթէ բարերար մը գտնուի Ճեմարանը շինելու տրամադիր, ո՛չ մէկ օրէնք, ո՛չ մէկ նկատում թոյլ կուտայ ճնշում ի գործ դնել նորա վրայ՝ Ներսիսեան վարժարանը շինելու։ Իրաւ, անժխտելի է թէ Խասգեղցիք Սկիւտարցիներէն աւելի պէտք ունին բարերարութեան մը։ Բայց մեր դիտողագիր բարեկամն անշուշտ կը սխալի երբ կը սպասէ որ Ներսիսեան վարժարանը վերաշինելու նախաձեռնութիւնը կրթասէր բարերարի մը կողմէ գայ։ Այդպէս չըրին, և այդպէս չեն ըներ Սկիւտարցիք։ Սամաթիացիներն ալ այդպէս չէին ըրած։ Խասգեղցին ինք նախաձեռնարկ պէտք է լինի իւր քայքայեալ վարժարանը վերաշինելու, և Սկիւտարցւոց նախանձաւորութիւնն անշուշտ կ'ազդէ Խասգեղցիներուն ալ։ Բայց եթէ Խասգեղցւոց աղքատութիւնն ամօթ չէ, հանրային գործոց համար իրենց անփութութիւնն անշուշտ եպերելի է։ Եթէ Ներսիսեան վարժարանին քայքայուն շէնքն ապացոյց է Խասգեղցւոց աղքատութեան, հապա ի՞նչ բանի նշանակ է այս վարժարանին այսչափ ժամանակէ հետէ ամուլ և անկարգ ընթացքն։ Այս վայրկենիս իսկ թաղին անիշխան և անխնամ վիճակն ի՞նչ բանի ապացոյց է։

Յուսանք որ այս թերութիւնք կը դարմանուին, և մաղթենք որ շատ չանցած գտնուի Ներսիսեան այն բազմարդիւն և համակրելի Վարժարանը վերաշինող կամ գէթ վերաշինութեան գործը դիւրացնող կրթասէր Բարերար մը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿՐՕՆ Ի ՌՈՒՍԻԱ

Փեթերպուրկ, 17 դեկտ. առ Թայմզ. — Քանի մը օր յառաջ ծանուցի քաղաքիս մէջ շրջագայող անկլիքան եկեղեցականի մը առժամանակեայ ձերբակալումը, ռուս ոստիկանութեան պաշտօնէից ծայրայեղ խանդեան բերմամբ, որք օտարազգիները ձերբակալելէն առաջ քննութիւն չեն ըներ, և անմեղ մարդիկ վայրապար կը բանտարկեն աւելի կամ նուազ երկար միջոց մը։ Այժմ պէտք է ծանուցանեմ Փեթերպուրկի Աւետարանական եկեղեցւոյն գերման հովիւներէն միոյն ձերբակալումն։ Այս մարդ եղբայրն է եղեր «Քէլլինոլ» կոչուած ռուսական նոր պայթուցիկ նիւթն հնարողին։ Այս ձերբակալութիւն սխալման մը արդիւնք չէ։ Ռուսիոյ մասնաւոր կրօնական-քաղաքական զարմանալի գաղափարներն հարկաւոր ըրեր են այս ձերբակալումն։ Հովիւ Պ. Ռիւլմէնէլի յանցանքը սա է.—Իբրեւ կրօնաւոր, պաշտօն ունէր գերմանական հիւանդանոցին մէջ, ուր ռուս հիւանդ մը կը ճանչէ։ Այս Ռուսն ալ կը պատկանէր աղանդաւորաց դասուն, որոց գաղափարներն հերետիկոսական կը նկատեն Օրթոտոքս Ռուսք։ Հիւանդ Ռուսը կը խնդրէ գերման հովուէն՝ իւր հօտին մէջ ընդունիլ զինք, և ըստ այնմ կը հաղորդուի։ Արդ, Ռուսիոյ մէջ Օրթոտոքս մը թէեւ իւր թախանձագին խնդրանօք ընդունուի ուրիշ կրօնի մը մէջ, թէ՛ ինք և թէ զինք ընդունող կրօնական պաշտօնեայն ոճրագործ կը նկատուին և ի Սիպերիա ղրկուելով կը պատժուին։ Գերման հովիւն այս դէպքէն ետքն օտար երկիր երթալու համար ճամբայ ելաւ։ Բայց վերջերս սահմանագլխոյ վրայ ձերբակալուելով, ռուս ոստիկանաց հսկողութեամբ Փեթերպուրկ բերուեցաւ դատուելու։ Անցեալ տարի շատ մը գերման հովիւներ նոյն ոճրով ամբաստանեցան Պալթիկեան գաւառաց մէջ, և չէ մոռցուած թէ ռուս երեւելի զօրավար Իշխան Պարքլէյ տը Թոլլի իւր բարձր պաշտօնէն զրկուեցաւ՝ լուտերական եկեղեցւոյ մէջ մկրտել տալուն համար իւր զաւակաց մին, որ սպայ է բանակին մէջ։

ՋՕՐ. ՊՈՒԼԱՆԺԷ

Ջօր. Պուլանժէ ըսեր է Նիւ-Եորք Ուորլտ լրագրոյ թղթակցին թէ կը փափաքի Ֆրանսական Հանրապետութեան Նախագահ լինել, և ապահով է թէ օր մը պիտի լինի։ Հերքեր է այն զրոյց թէ ինք պետական հարուած մը կամ պատերազմ յառաջ բերել կ'աշխատի։ Երեսփ. Ժողովոյն մէջ կաշառակերութիւն և Ծերակոյտին մէջ չփոթութիւն ուրեմն կը տեսնէ, և իւր խորհուրդն է Երեսփոխանութիւնը լուծել և Ծերակոյտը ջնջել։ Ֆրանսայի կէսն իրեն կրնակն է եղեր՝ ֆրանսական Սահմանադրութիւնն այս գաղափարներով վերաքննելու համար։ Կ'ատէ պատերազմը, բայց ի հարկին պիտի պաշտպանէ զՖրանսա։ Ջօր. Պուլանժէի համոզումն է թէ Ֆրանսա Ամերիկայի չափ հաստատապէս հանրապետական է։ Բայց իւր գէթ այս կարծիքն անշուշտ սխալ է. զի եթէ Ֆրանսայի ժողովուրդն այնչափ հաստատապէս հանրապետական լինէր, մէկ մարդու մը այնչափ սիրտ չէր յարեր։

ՖՐԱՆՍԱ.—ՓԱՆԱՄԱ

Ֆրանսայի գաւառաց մէջ բուռն զայրոյթ պատճառեց Երեսփ. Ժողովոյ քուէն, որով Փանամայի Ընկերութեան եռամսեայ պայմանաժամ մը զլացուեցաւ։ Գաւառացիք չեն հասկնար Երեսփոխանաց նկատումներն, և երբ Փանամայի Ընկերութեան հակառակ քուէ տուող Երեսփոխանք վերստին ներկայանան իրենց գաւառացի ընտրողաց առջեւ, խիստ ընդդիմութիւն մը պիտի գտնեն եղեր։

Թէպէտ Փանամայի Ընկերութեան բաժնեթուղթք, պարտատոմսք և հիմնադրաց բաժինք աչքի անկումներ կրեցին վերջին օրերս, բայց վճարահանութեան պարտատոմսք անխախտ մնացին իրենց գներուն վրայ, քանի որ վճարահանութենէ ելնելիք պարգեւներուն վճարումն ապահովեալ է Ընկերութեան կողմէ 80 միլիոն ֆր.ի արժէթղթոց գրաւի դրուելովը։

Փանամայի Ընկերութեան դէմ ո՛և է ժողովրդային ցոյց տեղի չունեցաւ։ Ամենէն վերջին ստորագրութեան մասնակցողք, յորմէ հետէ իմացան թէ իրենց դրամն ետ կը տրուի՝ 400,000 պարտատոմսերուն ամբողջովին չստորագրուելուն համար, ամենայն բարեկարգութեամբ ներկայացան Ընկերութեան կեդրոնատեղին՝ իրենց դրամն ետ առնելու, և թէպէտ ամեն ոք իւր կարգին սպասելու համար ժամերով կեցաւ, բայց, կ'ըսէ Թայմզի թղթակիցը, ամենքն ալ տակաւին կատարեալ վստահութիւն ունին Պ. տը Լէսէփսի վրայ։ Այս վստահութեան շնորհիւ դեռ եւս կարելի է այնպիսի կարգադրութիւն մ'ընել որ գործն ի գլուխ հանուի։ Ընկերութեան կրած կորուստը պիտի բաժնուի 400,000 ստորագրողաց միջեւ, որով մարդ գլուխ 120 անգլ. ոսկի վնաս կ'իյնայ (համագումար՝ 48,000,000 անգլ. ոսկւոյ կորուստ։) Բայց քանի որ այս գումարն ստորագրողք իրենց խնայութիւններէն հայթայթած էին զայն, թէեւ վնաս կը կրեն, բայց չեն կործանիր բոլորովին։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

ԾԵՐԱԿՈՅՏԻ ԲՈՂՈՔՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Փարիզ, 19 դեկտ.—Պ. Շալմէլ Լաքուռ, Ծերակոյտին մէջ, Ելմտացոյցի վիճաբանութեան առթիւ բանախօսելով, ըսաւ. «Այսօր խնդրոյ ներքեւ եղած բանը Ֆրանսայի ելեւմուտքն չեն, «այլ բովանդակ Ֆրանսայի ապագայն։ «Չարեաց պատճառն է Արմատական«ութիւնն, որ ատելութիւն ուխտած «է Հանրապետութեան վաղեմի հիմնա«դրաց դէմ, և անիրագործելի յատա«կագծոյ մը գործադրման զհետ կը «պնդէ։ Ֆրանսա, որ վանեց փառաւոր «Միապետութիւն մը, ամենէն աննշան «մարդու մը առջեւ նուաստանալու վը«տանգին մէջ է։ Արդի Նախարարու«թիւնը, փոխանակ կասեցնելու շար«ժումն որ անդունդը կը տանի զՖրան«սա, գործիք կը լինի նոյն շարժման. «Ժամանակ է բանաւոր քաղաքականու«թեան վերադառնալու։» Ատենաբանը կոչում ըրաւ աջակողմին՝ Ձախակողմին հետ միաբանութեամբ բարեկարգութիւնը պահպանելու և ազատութիւնն ու հայրենիքը փրկելու։

Պ. Ֆլոքէ պատասխանելով, ըսաւ թէ ինք հետամուտ չէր եղած իրեն յանձնեալ նախարարական պաշտօնին, և թէ իւր ջանից կէտ նպատակն եղած է Ձախակողմեան այլ և այլ խմբակները միացնել։ Արդի Նախարարութիւնը բարենորոգմանց քաղաքականութեան մը կը հետեւի։ Պ. Ֆլոքէ յարեց թէ գաւառակային քուէարկութեան ծրագիրը մատուցած է Երեսփ. Ժողովին՝ պայքարը շարունակելու համար (Պուլանժէականութեան դէմ)։ Պ. Ֆլոքէ յանկարծ վար իջաւ բեմէն, ի մեծ զարմանս Ծերակոյտի։ Պ. Թոլէն շարունակեց պաշտպանել Նախարարութեան քաղաքականութիւնն, և ըսաւ թէ բոլոր չարեաց պատճառը Պահպանողականք են։

ԷՄԻՆ ՓԱՇԱ ԵՒ Պ. ՍԹԷՆԼԻ ԱԶԱՏ ԵՆ

Պրիւքսէլ, 19 դեկտ.—Քոնկոյի կայարանին կառավարիչ Պ. Վինթոնի մէկ յայտարարութեան նայելով, ո՛չ Պ. ըՍթէնլի, ո՛չ ալ Էմին փաշա չունէին Շրնայտէրեան հրացաններ, այլ միայն Ռե-

---

-) 7 (-

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՌՆ

ՍԵՒ-ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ Գ.

—o—

ՏՕՉԱՐԴԻ ԳՈՒԲԸ

Հարրի Ֆորտ խոշոր տղայ մըն էր քըսանեւհինգամեայ, առոյգագեղ, պնդակազմ։ Իր քիչ մը լուրջ դիմագծութիւնն և սովորաբար մտախոհ դիրքը, մանկութենէն ի վեր մասնաւոր տեղ մը տուած էին նմա իր ածխահանքի ընկերներուն մէջ։ Իր կանոնաւոր դիմագծերը, խորին եւ անուշ աչերը, կարծր մազերն՝ աւելի շագանականագոյն քան խարտեաշ, իր անձին բնական հրապոյրն, ամէն բան կը միանար՝ զինքը կատարեալ տիպարն ընելու Լոուլէնտըրի, այսինքն դաշտաբնակ Սկովտիացւոյ գեղապանծ օրինակ մը։ Տղայ տարիքէն ի վեր ածխահանքին աշխատութեան մէջ կարծրացած, ուժեղ ընկեր մը ու քաջարի եւ ուղղամիտ բնաւորութեան տէր երիտասարդ մըն էր միանգամայն։ Հօրն առաջնորդութեամբ, իր անհատական բնազդումներէն վարեալ, աշխատած, կանուխէն ուսած էր, եւ այն տարիքին մէջ ուր այլք աշկերտ են լոկ, ինք կըրցած էր մէկը լինիլ, — իրեն միճակակիցներուն առաջիններէն մին, — այնպիսի երկրի մը մէջ ուր տգէտները քիչ են, որովհետեւ ամէն բան կ'ընէ տգիտութիւնը ջնջելու համար։ Թէեւ իր պատանեկութեան առաջին տարիներուն Հարրի Ֆորտ ձեռքէն չթողուց բրիչն, այսու հանդերձ երիտասարդ հանքահանը կըցաւ ձեռք բերել հարկ եղած ծանօթութիւնները՝ բարձրանալու համար ածխահանքին պաշտօնէութեան մէջ, եւ անշուշտ հօրը պիտի յաջորդէր իբր գործավար Տօչարդի գուբին մէջ, եթէ ածխահանքը չլքուէր։

Ճէյմս Ստար դեռ լաւ քալող մըն էր, սակայն չպիտի կրնար դիւրաւ հետեւիլ իր առաջնորդին եթէ սա չչափաւորէր իր քայլերը։

Անձրեւը կը տեղար յայնժամ նուազ սաստկութեամբ։ Լայն կաթիլները կը փոշիանային՝ գետին հասնելէ առաջ։ Թաց ամպոտներ էին ասոնք առաւելապէս, որք օդին մէջ կը սուրային սաստկաշունչ քամիէ մը վարեալ։

Հարրի Ֆորտ եւ Ճէյմս Ստար, — երիտասարդը ձեռքն առած ճարտարապետին թեթեւ ծրարը, — գետին ձախ ափունքը քերեցին իբր մղոն մը երկայնութեամբ։ Ոլորապտոյտ գետափունքին երկայնքով քալելէ յետոյ, ճամբու մը մէջ մտան որ կը խորասուզէր դաշտորէից մէջ՝ ջրաթաթաւ բարձրաբերձ ծառերուն ներքեւ։ Ընդարձակ արօտավայրեր կը տարածուէին թէ՛ այս եւ թէ՛ այն կողմ, կղզիացեալ ագարակներուն շուրջ։ Քանի մը երամակներ հանդարտօրէն կը ճարակէին դաշտային Սկովտիոյ այս մարգերուն մշտադալար խոտը։ Անեղջիւր կովեր էին ասոնք, կամ մետաքսաւէտ բուրդով փոքր ոչխարներ, որք մանկանց գոմերու ոչխարներուն կը նմանէին։ Ոչ մէկ հովիւ կ'երեւէր, անտարակոյս ապաւինած լինելով ծառի մը խոռոչին մէջ. սակայն շուն մը, որ Մեծին Բրիտանիոյ այս երկրին յատուկ շուն մըն է՝ իր արթնութեամբն հռչակաւոր, կը շրջափառէր արօտավայրին շուրջը։

Եարոուի հորն իբր չորս մղոն հեռի էր Գէլլընտըրէ։ Ճէյմս Ստար, ճամբուն վրայ, բազմադիմի տպաւորութեանց կ'ենթարկուէր։ Տեսած չէր երկիրն այն օրէն ի վեր յորում Աբըրֆոյլի ածխահանքերուն վերջին տակառաչափը լեցուցած էին Կլասկովի երկաթուղային վակոններուն մէջ։ Երկրագործական կեանքն այժմ յաջորդած էր ճարտարական կենաց որ միշտ աւելի մեծադղորդ, աւելի գործօն է։ Հակապատկերն այնու մանաւանդ աչքի կը զարնէր որ, ձմեռը, դաշտաց աշխատութիւնք տեսակ մը անգործութեան կը դատապարտուին։ Սակայն երբեմն, ամէն եղանակներուն, հանքահաններուն ամբոխը, թէ՛ հողին վրայ եւ թէ՛ հողին ներքեւ, կ'ոգեւորէր այդ երկիրը։ Գետնածուխի մեծ սայլերը կ'անցնէին գիշեր ցերեկ։ Երկաթուղիները որք այժմ թաղուած էին իրենց փըտած պահանգներուն վրայ, կը ճռնչէին վակոններուն ծանրութեան ներքեւ։ Հիմա, քարէ եւ հողէ ճանբան տակաւ առ տակաւ կը յաջորդէր շահագործման նախկին թրամուէյներուն։ Ճէյմս Ստարի այնպէս կուգար թէ անապատէ մը կ'անցնի։

Ճարտարապետը չորս դին կը նայէր տխրահայեաց աչերով։ Մերթ ընդ մերթ կը կանգնէր, շունչ առնելու համար։ Մտիկ կ'ընէր։ Օդն հիմակ ա՛լ չէր լցուեր հեռաւոր սուլերով եւ մեքենայներուն շնչասպառ ժխորով։ Հորիզոնին վրայ, ոչ մին այն սեւորակ գոլորշիներէն որք մեծ ամպերուն կը խառնուէին, եւ որոց հանդիպիլը կը սիրէ ճարտարագէտն։ Ոչ մէկ գլանաձեւ կամ հատուածակողմեան ծխնելոյզ որ մուխ պոռթկար, ոչ մէկ խողովակ որ անդուլ անընդհատ դուրս տար իր սպիտակ շոգին։ Հողն, որ յառաջագոյն աղտոտած էր գետնածուխի փոշիէն, մաքուր տեսք մ'ունէր որում վարժուած չէին Ճէյմս Ստարի աչերը։

Երբ ճարտարապետը կանգ կ'առնուր, Հարրի Ֆորտ ալ կը կենար։ Երիտասարդ հանքահանը լուռ կ'սպասէր։ Բայց կ'զգար թէ ի՛նչ կ'անցնէր իր ուղեկցին մտքին մէջ, եւ ինքն ալ սաստկապէս կ'զգար այդ տպաւորութիւնն, — ինք, ածխահանքին մէկ զաւակն, որ բոլոր կեանքն անցած էր այդ հողին խորոց մէջ։

—Այո, Հարրի, այս ամէնը փոխուած է, ըսաւ Ճէյմս Ստար։ Սակայն պարպելով պարպելով, օր մըն ալ գետնածուխի գանձերը պիտի սպառէին։ Ցաւելով կը յիշես այն ժամանակը։

—Այո, պարոն Ստար, պատասխանեց Հարրի։ Աշխատութիւնը ծանր էր, սակայն շահագրգիռ էր, որպէս ամէն պայքար։

—Անշուշտ, տղա՛ս։ Ամէն վայրկեանի պայքարը, փլուզմանց, հրդեհներու, ողողմանց, կայծակի պէս պայթող կրիզուի հարուածներուն վտանգը։ Պէտք էր դիմադրաւել այս վտանգներուն։ Աղէկ կ'ըսես։ Պայքարն էր այն, և, հետեւաբար, սրտադրաւ կեանքը։

—Ալլօայի հանքահաններն Աբըրֆոյլի հանքահաններէն աւելի բաղդաւոր եղան, պարոն Ստար։

—Այո, Հարրի, պատասխանեց ճարտարապետը։

—Իրօք ցաւալի է որ, գոչեց երիտասարդը, բոլոր երկրագունդս միմիայն գետնածուխէ բաղկացած չէ։ Քանի մը միլիոն տարուան կը բաւէր։

—Անտարակոյս, Հարրի, սակայն պէտք է խոստովանիլ որ բնութիւնը նախագուշութեամբ շարժած է՝ մեր երկրագունդը գլխաւորապէս կազմելով աւազաքարէ, կրաքարէ, հատաքարէ, զորս կրակը չկրնար սպառել։

—Ըսել կ'ուզէք, պարոն Ստար, թէ մարդիկ վերջ ի վերջոյ պիտի այրէի՞ն իրենց երկրագունդը։

—Այո՛։ Ամբողջն ալ, տղաս, պատասխանեց ճարտարապետն։ Երկիրս մինչեւ իր վերջին կտորը պիտի անցնէր վառարաններու, շոգենաւերու, գործարաններու հնոցներուն մէջ, և, անշուշտ, օր մը այսպէ՛ս պիտի վերջանար աշխարհս։

—Այդ վախը չունինք, պարոն Ստար։ Բայց նաեւ ածխահանքերն անշուշտ պիտի սպառին, վիճակագիրներուն ցոյց տուածէն աւելի շուտ։

—Այդ այդպէս պիտի ըլլայ, Հարրի, և, ըստ իս, Անգլիա թերեւս կը սխալի իր վառելանիւթը փոխանակելով միւս ազգաց ոսկւոյն հետ։

—Արդարեւ, պատասխանեց Հարրի։

—Գիտեմ թէ, յարեց ճարտարապետն ո՛չ ջրաբաշխութիւնն, ո՛չ ելեկտրականութիւնն իրենց կատարելութեան ծայրագոյն աստիճանին հասած չեն դեռ, և օր մը աւելի կատարելապէս յօգուտ ի կիր պիտի արկանեն այս երկու զօրութիւնները։ Բայց ի՛նչ փոյթ։ Գետնածուխը շատ գործնական է և դիւրաւ կը պատշաճի ճարտարութեան զանազան պիտոյից։ Դժբաղդաբար, մարդիկ չեն կրնար ըստ կամս յառաջ բերել զայն։ Եթէ արտաքին անտառներն անդադար կ'աճին տաքութեան եւ ջրի ազդեցութեան ներքեւ, ներքին անտառները չեն բուսնիր, եւ երկրագունդս երբեք հարկ եղած պայմաններուն մէջ չ'պիտի գտնուի վերստին կազմելու համար զայնս։

Ճէյմս Ստար և իր առաջնորդը, խօսակցելով հանդերձ, վերսկսած էին իրենց ընթացքն արագ քայլերով։ Գէլլընտըրէ մեկնելէ ժամ մը յետոյ, Տօչարդի գուբը կը հասնէին։

Անտարբեր մը իսկ պիտի զգածուէր լքեալ հաստատութեան ներկայած տխուր տեսարանէն։ Երբեմն կենդանի բանի մը կմախքն էր այս գոգցես։

(Շարունակելի)

մինիՁրնի և Ուինչէսթրի հրացաններ, կը յիշուի թէ Օսման Տիկմա, Էմին փաշայի և Պ. Սթէնլիի գերութեան մասին իւր պատմութիւնն ապացուցանելու համար, Շնայտէրեան քանի մը փամփուշտներ ղրկած էր ի Սուաքին. (Այս աւուր հեռագրաց կարգին մէջ պիտի տեսնուի չատ կարեւոր լուր մը, որուն նայելով Էմին փաշա և Պ. Սթէնլի գերի չեն ինկած Մէհտիին, այլ ազատ են և ապահով տեղ կը գտնուին.)

—Հռոմ, 19 դեկտ.—Ուսանողաց խըռովայոյզ ցոյցերուն պատճառաւ, Համալսարանը փակեցաւ.

—Փեթերսպուրկ, 19 դեկտ.— Պաշտօնական լրագիրն Ռուս մը կը հրատարակէ, որուն համեմատ Չէթինեէի աղջկանց վարժարանին տարեկան նպաստը 10,000 ֆիորինի բարձրացած է. Վարժարանին տնօրինուհին և վարժուհիք ռուսական թոշակներ պիտի ընդունին. (Այս տնօրինութիւն կը ցուցնէ Ռուսիոյ և Չեռնակորայի միջեւ մտերմութեան աւելնալն. Օրքէն քանի մը օր առաջ մեծապէս ուշադրութիւն գրաւեց Չեռնակորայի Նիքոլա իշխանին կողմէ Խերսոնի ռուս Արքեպիսկոպոսին ուղղեալ նամակ մը, որով կ'ըսէր. «Հաւատացէ՛ք ինձ, Գերապատիւ «Հայր, երբ կ'ըսեմ թէ բոլոր Չեռ«նակորացիք հոգւով ու մարմնով անձ«նուէր են ուղղափառ Ռուսիոյ, որուն «հետ կապուած ենք ցեղային կապե«րով, և մեծապէս երախտապարտ ենք «ռուս ժողովրդեան եղբայրական ըղ«ձացմանց համար, որ իւր բարեկա«մութեան բազմաթիւ ապացոյցներն «ընծայած է մեզ.»

—Պուքրէշ, 19 դեկտ.—Պատերազմական նախարար Անկէլէսքօ զօրավար իւր պաշտօնավարութեան միջոցաւ ըրած գողութեանց համար դատապարտեցաւ եռամսեայ բանտարկութեան, 3,000 ֆր. տուգանքի և 30,000 ֆր. գումար մ'ալ գանձարանին ետ տալու.

—Սոֆիայէն դեկտ. 19ին մերժեց դատական նախարար Պ. Սթոյլովի Ներկայած քանի մը օրինական ծրագրերն և այս պատճառաւ Պ. Սթոյլով հրաժարական տուաւ. Կ'ըսուի թէ արտաքին գործոց նախարար Պ. Նաչեւիչ եւ պատերազմական նախարար Մութքուրով գնդապետ եւս հրաժարական տըւեր են. Պ. Սթամպուլով Նոր նախարարութիւն մը կազմել կ'աշխատի.

—Հաւաս կը հեռագրուի թէ Պապը կարեւոր գումար մը ղրկած է Յունաստանի պապական նուիրակ Մարենկօ Գերապայծառին՝ կաթոլիկ Լիկէոն մը բանալու համար Աթէնքի մէջ.

—Մալթայէ կը հեռագրուի թէ դեկտ. 18ին, Թէաթրօ Ռէալի մէջ, Ֆ[illegible]րի ներկայացման միջոցին, վառօդաւոր նիւթեր պարունակող տուփ մը պայթած է, մեծ յուզում պատճառելով հանդիսականներուն մէջ. Էտիմպըրկի դքսուհին ներկայ էր, եւ պաշտօնական անձնաւորութիւն մը ձերբակալեցաւ իբրեւ դրդիչ այս պայթման. (Մշ. [illegible])

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Վարչութեան որոշմամբ՝ հեռագրաւ մայրաքաղաքս կոչուած էր Արժ. Եզրաս վարդապետն որ այս միջոցիս Պալըքէսիր կը գտնուի եւ զոր տեղացիք կ'ուզեն իրենց առաջնորդական տեղապահ կարգել.

Տեղւոյն Թաղական Խորհուրդը պատասխանելով սոյն հեռագրոյն, յայտնած է թէ թէեւ հարկ է հնազանդիլ կեդրոնին հրամանաց, սակայն ժողովուրդը թախանձագին կը խնդրէ որ Տ. Եզրաս վարդապետ անդ մնայ. Ասոր վրայ Ազգ. Պատրիարքարանի կողմէ կրկին հեռագրաւ ծանուցուած է որ Կեդր. Վարչութիւնը նկատողութեան պիտի առնու իրենց խնդիրը, սակայն պէտք է որ այդ վարդապետ անմիջապէս մայրաքաղաքս գայ.

Գեր. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Ռոտոսդոյի առաջնորդական տեղապահի պաշտօնէն հրաժարելուն առթիւ նամակ մ'ուղղելով առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, յայտնած է որ եթէ առաջնորդական վիճակաց վերակազմութեան ծրագրոյն համեմատ՝ յորում Ռոտոսդոյ միացեալ է ընդ Ադրիանուպոլսոյ, իրեն յանձնուի յիշեալ միացեալ վիճակի հովուութիւնը, պատրաստ է ընդունիլ զայն ո՛չ թէ իբր տեղապահ՝ այլ իբր առաջնորդ. Իսկ եթէ յիշեալ ծրագրին գործադրութիւնը պիտի յապաղի, Հմայեակ Սրբազան պատրաստականութիւն կը յայտնէ իբր հոգեւոր-հովիւ այցելութեան շրջիլ ամբողջ Օսմանեան գաւառներն, սկսեալ ի Պոնտոսէ, քաղաքէ քաղաք երթալ և քարոզել, և եթէ այսմ իսկ արգելք կան, յայնժամ կ'ընդունի Պուլկարիոյ և Ռումանիոյ հոգեւոր այցելութիւնը.

Սրբուհի Մայրապետ Գալֆայեան անկողնոյ կը ծառայէ տակաւին, իւր հիւանդ վիճակին մէջ մտածման միակ առարկան ընելով իւր Որբանոցի բարեկարգութիւնը. Ազն. տիկին Խ. Օտեանի և տիկին Ս. Կ. Սրվաճեանի հանգանակութիւնը ըստ կարելւոյն կ'ամոքէին այդ անձնուէր Մայրապետին տառապանքը. Յիշեալ տիկնայք եօթն ոսկւոյ մօտ գումար մ'ալ հաւաքած են, երկրորդ հանգանակութեամբ մը, և տարակոյս չունիմք թէ նորանոր նուիրատուութիւնք պիտի աւելնան կատարուած հանգանակութեան վրայ, ի մխիթարութիւն Սրբուհի մայրապետին և յօգուտ Որբանոցի.

Շաբաթ օրն ստացանք մէկ արծ. մէճիտ ի Միհրան էֆ. Մ. Տէմիրճեանէ՝ հանգանակիչ տիկնայց յանձնելու համար.

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳԻՐ

Պ. Աւետիք Արասխանեան, որ յառաջիկայ յունվար 1 էն ի Թիֆլիս պիտի հրատարակէ ՄՈՒՐՃ անուամբ «քաղաքական, հասարակական և գրական» ամսագիր մը, մեզ հաղորդած է իւր հրատարակութեան ծրագիրը.

1. Յօդուածներ գրական, տնտեսական եւ հոգեւոր բովանդակութեամբ.
2. Բանասիրական՝ վէպեր, պատմութիւններ, դրամաներ, ոտանաւորներ, երգիծաբանութիւն.
3. Յօդուածներ Կովկասեան կեանքի հասարակական խնդիրներից.
4. Թղթակցութիւններ Ռուսաց տէրութեան և Արտասահմանի զանազան տեղերից.
5. Յօդուածներ գիտութեան զանազան ճիւղերից.
6. Գրախօսութիւն և Քննադատութիւն.
7. Հաշիւներ այլ և այլ ընկերութիւնների Նիստերի.
8. Թատրոն, Երաժշտութիւն, Գեղարուեստ.
9. Տեսութիւն Ներքին և արտաքին քաղաքական անցքերի.
10. Ներքին և արտաքին Քրոնիկոն և զանազան լուրեր.
11. Յայտարարութիւններ.

«ՄՈՒՐՃ» ամսագիրը լինելու է մեծադիր, քառածալ. Իւրաքանչիւր համար ունենալու է 8-ից մինչեւ 10 տպագրական թերթ, որ նոյնն է թէ 128 ից մինչեւ 160 երես. Բոլոր 12 համարները կ'կազմեն երկու հատոր չուրջ 1800 երեսով.

«ՄՈՒՐՃ»—ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ՝ տարեկան 10 ռուբլի, կէս տարուան՝ 6 ռուբլի կանխիկ վճարելի. Փոստի ծախքերը կրում է խմբագրութիւնը.

Միքայէլ էֆէնտի Կիւլլապեան և Կիւլլապեան ընտանիքն իրենց խորին շնորհակալիքը կը յայտնեն ամեն անոնց որք փութացած էին ցաւակցութիւն յայտնել իրենց հանգուցեալ մօր՝ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԿԻՒԼԼԱՊԵԱՆԻ մահուան առթիւ և ներկայ գտնուած էին նորա յուղարկաւորութեան.

ՄՇՈՅ ԴԷՊՔԸ

Երէկի Թարիք՝ Ճէրիտէի Մէհաքիմէն արտատպած է Մշոյ ընդհանուր դատախազի օգնականին ամբաստանագիրը զոր տեղւոյն հայ-հռոմէականաց առաջնորդ Յովհաննէս Գերապայծառին վրայ կատարուած սպանութեան փորձին առթիւ ամբաստանելոց դատուելու պահուն կարդացած է. Ընդհանուր դատախազը պատմելով ծանուցեալ դէպքն ինչպէս նաեւ ամբաստանելոց խոստովանութիւնները, սոցա պատժուիլը խնդրած է. Ընդհանուր դատախազի օգնականն ի վերջոյ յաւելած է թէ Յովհաննէս Գերապայծառ այս առթիւ հրաժարած է իւր անձնական իրաւունքէն և թէ ի հարկին իբրեւ վկայ միայն կրնայ հրաւիրուիլ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Պուքրէշի օսմանեան դեսպան անուանուեցաւ Աթէնքի օսմանեան նախորդ դեսպան Ֆէրիտուն պէյ.

Մէարիֆի քննիչ ժողովոյ անդամ անուանուեցաւ Ահմէտ պէյ, որդի Աթէֆ պէյի.

Գարահիսարը Շարգիի ընդհանուր դատախազի օգնական անուանուեցաւ Իրաւագիտական վարժարանի շրջանաւարտներէն Մահմուտ Նէճիպ էֆէնտի

——

Իւլայի երկրորդ աստիճան եւ երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Թղթատարական վարչութեան օգնական [illegible] էֆէնտիի.

Սալիսէի աստիճան՝ Էնկիւրիի վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազ Ահմէտ Րէշիտ պէյի.

Մէքքէի Մոլլա անուանուեցաւ Թէտգիգաթը Շէրիյէ ժողովոյ առաջին քարտուղար Շիւքրի էֆէնտի.

Մէտինէի Մոլլա անուանուեցաւ որբերու ստացուածոց վարչական ժողովոյ անդամ Ֆէյզի էֆէնտի.

Երրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ գերմանական դեսպանատան երկրորդ քարտուղար և խորհրդականի փոխանորդ Լիխնովսքի իշխանին.

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ մայրաքաղաքիս գերմանական փոխ հիւպատոս Պ. Հարթմանի.

Վեհ. Սուլթանն արտօնած է Մէարիֆի օտար թղթակցութեանց քարտուղար Նորկարի էֆէնտին՝ գործածելու Իֆթիխարի պատուանշանը զոր Սուլթան Մէճիտ շնորհած էր իւր հօր Ֆէնէրի Պատրիարքարանի գործակատար հանգուցեալ Անտոնաքի էֆէնտիի.

ՍԻՒԷԶԻ ՋՐԱՆՑՔ

Սիւէզի ջրանցքին չէզոքացման պայմանագրոյ վաւերացեալ օրինակներու փոխանակութիւնն այս շաբաթ օր տեղի ունեցաւ ի Բ. Դրան. Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշայի հրաւիրանաց վրայ շաբաթ օրը ժամ 10ին Բ. Դուռը գնացին ռուսական, գերմանական, աւստրիական, իտալական, անգլիական, հոլանտական դեսպանք և ֆրանսական ու սպանիական դեսպանատանց գործակատարք. Արտաքին թղթակցութեանց քարտուղարներէն Եուսուֆ պէյ ընթերցաւ պայմանագրոյ վաւերացեալ օրինակն որ յետոյ փոխանակուելով պայմանագիրն վերջնական հանգամանք մը ըստացաւ.

ԲԱՐՁՐ ԻՍՄԱՅԻԼ ՓԱՇԱ

Վեհ. Սուլթանը տեղեկանալով որ Նախորդ Խտիվ Իսմայիլ փաշա հիւանդ է, Իւր առաջին թիկնապահ Մէհմէտ փաշան ղրկեց Ն. Բարձրութեան ապարանքն Էմիրկեն. Մէհմէտ փաշա Ն. Վեհափառութեան կայս. բարեւներն հաղորդելով Իսմայիլ փաշայի ողջութիւնը հարցուց.

ԱԼԻ ՊԷՅ

Մօնիթէօռ կ'իմանայ թէ Վեհ. Սուլթանի մասնաւոր Արկեղ պաշտօնեաներէն Ալի պէյ՝ վախճանեալ Ֆայիզ պէյի յաջորդ անուանուեր է.

ԴԷՐ-ԾՈՎԱԿԱԼ ՀՈԼՄԱՆ

Դէր-Ծովակալ Հոլման, ընկերակցութեամբ թիկնապահ Ահմէտ փաշայի ու գնդապետ Օսման պէյի, շաբաթ օրը Պոլսոյ կողմն անցաւ պալատական կառքերով և այցելեց կայս. թանգարանն, Այասոֆիայի մզկիթը, Մեծ Շուկան և այլ նշանաւոր վայրեր.

Դէր Ծովակալն երէկ եւս պալատական կառքերով Աղապքարուի Նաւաշինոյը գնաց և անտի պալատական հինգզուգաթի նաւակներով Ոսկեղջիւրին մէջ շրջեցաւ մինչեւ [illegible]. Դէր-ծովակալին անցած պահուն օսմանեան զրահաւորաց զինուորք բարեւի կեցան.

Դէր-ծովակալ Հոլման այս շրջագայութենէն յետոյ իւր բնակած Օթէլը վերադարձաւ և իրիկուան ժամ 11½ին պաշտօնական համազգեստով Ծովային Նախարարութեան պաշտօնատունը գընաց ուր շքեղ հացկերոյթ մը տրուեցաւ. Դէր ծովակալը մեծ սրահին մէջ հիւրասիրուելէ և Ծովային Նախարար Վսեմ. Հասան փաշայի հետ տեսակցելէ յետոյ ժամ կէսին ճաշի սրահն առաջնորդուեցաւ. Անդ քսան և ութ հոգւոյ շքեղ սեղան մը պատրաստուած էր. Հացկերոյթին սկիզբէն մինչեւ վերջը ծովային զինուորաց նուագածուաց խումբը գեղեցիկ կտորներ նուագեց անընդհատ. Սեղանին ներկայ գտնուեցան նաեւ Ծովային Նախարար Հասան փաշա, գերմանական դեսպան Պարոն տը Ռատովից, արքունական Մունիր փաշա, Ծովային խորհրդոյ Նախագահ Ֆերիգ Հասան փաշա, կայս. թիկնապահ Ֆերիգ Ահմէտ փաշա, Սթարիս փաշա, Վուտս փաշա, թիկնապահ գնդապետ Օսման պէյ և այլ ծովային սպայք բոլորն ալ պաշտօնական համազգեստով և պատուանշան ի կուրծս. Սեղանին վրայ Ծովային Նախարար Հասան փաշա թուրքերէն և անգլիերէն բանախօսութիւն մը ըրաւ որոյ անգլիերէն և ֆրանսերէն լեզուաւ պատասխանեցին դէրծովակալ Հոլման ու Պարոն տը Ռատովից. Նոյնպէս Վեհ. Սուլթանի կենաց ու արեւշատութեան համար բաժակներ պարպուեցան. Հացկերոյթն աւարտեցաւ ժամ 2½ին և հրաւիրեալք մինչեւ ժամ 4 տեսակցելէ յետոյ իրենց տեղերը վերադարձան. Հացկերոյթի միջոցին հրախաղութիւնք եղան ինչպէս նաեւ դէրծովակալի մեկնած պահուն քարափին և [illegible] զրահաւորին վրայ լուսավառութիւնք կատարուեցան.

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Նիկոմիդիա - Էնկիւրիի երկաթուղւոյն շինութեան համար կազմեալ ընկերութեան կանոնագիրը շաբթուս մայրաքաղաքս պիտի ղրկուի, կայս. կառավարութեան վաւերացման մատուցուելու համար.

ԹՈՒՐՔ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՔ

Վեհ. Սուլթանը գնահատելով Թուրք աղջկանց վարժապետանոցին և արհեստական գիշերօթիկ վարժարանին աշակերտուհեաց կողմէ պատրաստուած մէկ քանի նիւթերը, գեղարուեստից շքանշաններ շնորհած է այդ վարժարաններու տնօրէնուհեաց և նիւթերը պատրաստող աշակերտուհեաց.

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ելմտական Նախարարութեան Պէյթիւլմալի տնօրէն Հիւսնի էֆէնտի, որ Նիկոմիդիոյ գաւառակաց տասանորդի տուրքերը քննելու համար այդ կողմերը գնացած էր, իւր պաշտօնն աւարտած լինելով երէկ մայրաքաղաքս ժամանեց և տեղեկագիր մը մատոյց Ելմտական Նախարարութեան.

Ի Բ. ԴՈՒՌՆ

Նախարարաց Խորհուրդն իւր երեկի սովորական նիստին մէջ քննելով Ելմտական բարենորոգմանց ծրագիրն տեղեկագիր մը պատրաստեց և մատոյց Վեհ. Սուլթանին.

Նախարարաց Խորհուրդը նոյնպէս քննեց Պ. Սիֆէլտէրի առարկութիւններն ի մասին Հայտար Փաշայի երկաթուղւոյն յանձնման.

Բարձր. Շէյխ-իւլ-Իսլամ էֆէնտին հիւանդ լինելով ներկայ չգտնուեցաւ Նախարարաց Խորհրդոյ երեկի նստին.

—Ներքին գործոց նախարար Վսեմ. Մունիր փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովը շաբաթ օրն ի նիստ գումարեցաւ և երկարօրէն խորհրդակցեցաւ. Յանձնաժողովոյ ցրուելէն յետոյ Ելմտական առժամեայ նախարար Վսեմ. Յակոբ փաշա և Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց նախարար Վսեմ. Զիհնի փաշա Բարձր. Մեծ-Եպարքոսին քով գնացին և պահ մը խորհրդակցեցան Ն. Բարձրութեան հետ.

ՀԱՆԴԻՍՏԵԱՆ ԹՈՇԱԿ

Ներքին գործոց Նախարարութիւնը հրահանգ ուղղեց ամեն կողմ որ հանգստեան կոչուելիք պաշտօնէից համար տրուած բարւոք ծառայութեանց տեղեկագրերու մէջ բացայայտ կերպիւ նշանակուին պաշտօնէից պաշտօնավարութեան ժամանակամիջոցը, ամսաթոշակի քանակութիւնն և այլ անհրաժեշտ մանրամասնութիւններ.

ՍԱՐԸԵԱՐԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Վերաքննիչ Ատենի անդամներէն Մոստիճեան Յարութիւն էֆէնտի, որուն յանձնուած էր Սարըեարի ոճրագործութեան քննութիւնը կը շարունակէ իւր քննութիւններն, ինչպէս նաեւ այդ ոճրի առթիւ բանտարկեալ 8-10 ամբաստանելոյ հարցաքննութիւններն որով ինչ ինչ ապացոյցներ երեւան ելած են նոցա ոճրին հաստատող.

Կ'ըսուի թէ Սէֆէր անուն անձն, որ այդ ոճրի գործուելէն յետոյ Ռումանիա փախած էր, ձերբակալուած է անդ և մայրաքաղաքս պիտի ղրկուի.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՔ

Ներքին գործոց Նախարարութիւնն հրահանգ ուղղեց ամեն կողմ որ [illegible] կոչուած հողերու վրայ առանց արտօնութեան շէնքեր չկառուցուին.

—Ներքին գործոց Նախարարութիւնն հրահանգ ուղղեց հարկ եղած տեղերն որպէս զի ազդու միջոցներ ձեռք առնուին երկաթուղւոյ ճամբաներն մաքուր պահելու և կառախմբոց կանոնաւոր երթեւեկութիւնն ապահովելու համար. Նոյնպէս ազդարարել ժողովրդեան որպէս զի իրենց անասուններն երկաթուղեաց գծերու վրայ չթողուն.

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Դատական Նախարարութեան որոշմամբ իրաւագիտական վարժարանին այս տարուան շրջանաւարտներէ ոմանք հարցաքննիչ դատաւորաց տրամադրութեան ներքեւ պիտի դրուին դիզեալ գործերու կարգադրութեան առթիւ գրաւորապէս օգնելու համար.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Առեւտ. Լրագրէն քաղուած)

Հրապարակի վիճակն զգալապէս բարւոքեցաւ վերջին շաբթուն մէջ. թէ՛ ներածութեան և թէ՛ արտածութեան գործերն ըստ բաւականին բանուկ վիճակ մը ստացան. [illegible] ցորենի հասաւ 20,000 գրիւ և վաճառումը 25,000 գրիւի հասած լինելով, տարբերութիւնը 50,000 գրիւի հասցուց նախորդ շաբթէն գտնուած պատրաստի քանակութիւնն. Այդ ցորեններու գները գրիւ գլուխ 20 փարայի անկում մը ունեցան. Թալղանէն սպասուած երկու նաւերն որոց մեկնումը ծանուցած էինք, մեր նաւահանգիստը մտան որով [illegible] ու [illegible] ցորեններն, որոցմէ բնաւ չէ կար տասն հինգ օրէ ի վեր, 45,000 գրիւ կը հաշուուին այժմ. Շաբթուս մէջ վաճառեցաւ 15,000 գրիւ, նոր հասածներէն, [illegible] դրանիքով Եւրոպա զրկուեցան 1.000 պարկ, գրիւը 12 ղրուշէն. Գուլի վրայ գործ չեղաւ բնաւ. Գարիով [illegible], ժամանմանց գումարն է 1500 պարկ և վաճառմանց գումարն 2000 պարկ, որով պատրաստ գտնուած 8500 պարկի քանակութիւնն 8,000 պարկի իջաւ. Լուբիայի գներուն վրայ քանի մը ղրուշի բարձրացում յառաջ եկաւ. Դանուբէն և Տրապիզոնէն բերուած տեսակներէն վաճառեցան 400 պարկ. Սիսեռի վրայ գործ չեղաւ և շաբթուս մէջ հասածներու գումարն 500 պարկ լինելով, պատրաստի քանակութիւնը 3,500 պարկի բարձրացուց. 650 պարկ [illegible] վաճառեցաւ, 87էն 92 փարայի. Մարսիլիոյ մէջ աբեւեկից սուսամի գինն է 36½ ֆրանք. 250 պարկ կանեփի հունտ վաճառեցաւ 45 էն 46 փարայի. Խաշխաշի հունտի վաճառմանց գումարը կը հասնի 200 պարկի և պատրաստի պակասութիւն կայ. Ճէհրիի հրապարակը բաւական բանուկ է. գները բռնուած են և վաճառումը 600 օխայի հասան շաբթուս մէջ. 1600 պարկ կաղին վաճառուեցաւ դրանիքով օտար երկիրներու համար 92 ղրուշէն, և տեղական սպառման համար 110 ղրուշէն. Գազի խէժի վրայ կանոնաւոր գործեր եղան. գները լաւ բռնուած են եւ վաճառումը հասան 1000 օխայի, 500 օխա [illegible] վաճառեցաւ, օխան 15½ — 16 ղրուշէն.

Գալով արտածելի նիւթոց, աֆիոնի հրապարակը բաղդատաբար բարւոքած է վերջին եօթնեկին մէջ. Վաճառեցան 12 սնտուկ Գարահիսարի ընտիր տեսակէն, օխան 141 ղրուշի, և 12 սընտուկ եւս երկրորդական տեսակէ՝ 119 ղրուշի. Թիֆթիկի վրայ բնաւ գործ չեղաւ, նախորդ շաբթուան նման.

Կապերտի վրայ բաւական բանուկ գործեր եղան. Վաճառեցաւ 1200 քառակուսի կանգուն Ֆէրաղան, կանգունը 15 ֆրանքի. 200 կանգուն Հէքրիս, կանգունը 19 ֆրանքի և Շիրվան ու Տաղըստան տեսակները 500 ոսկւոյ.

Գալով բամպակին, թէեւ ամերիկեան արտադրութեանց մասին լուրերը բաւական նպաստաւոր են, սակայն Եգիպտոսի մէջ Նեղոսի յորդման պատճառաւ նուազած են. 2,500,000 գանթարէն աւելի չպիտի արտադրուի.

—Կայս. կառավարութիւնն արգիլեց [illegible] կոչուած իւղով խառն ձէթի ներմուծումն ի Թուրքիա. Զուտ [illegible] իւղերն, ըստ առաջնոյն, պիտի ներմուծուին անարգել. սակայն անոնց ուրիշ իւղերու հետ խառնուիլը խստիւ արգիլուած է.

—Սամոսի կառավարչին մէկ հրամանագրոյն համաձայն՝ խարդախեալ [illegible]ներու ներմուծումն արգիլուած է կղզւոյն մէջ.

—Պաշտօնապէս ծանուցուած է Առեւտրական ատենին՝ թէ Ստավրոս Եօրկիատէս, վաճառական ի Պոլիս, Յակոբեան խան, թ. 6 և Քիւրքճի խան թ. 15, սնանկացեր է.

ՆՈՐ ՏՈՒՓ ՄԸ

Նիւ-Եօրքի մէջ հրատարակեալ գիտական լրագիր մը (Սայէնթիֆիք Ամերիքըն) հետեւեալը կը ծանուցանէ.

«Պ. Գասպար Գ. Գրիգորեան արտօնագիր (brevet) ստացեր է իւր հնարած մէկ տուփին համար որուն [illegible] անունը տուած է. Այս տուփ ամեն կողմէ կը բացուի, որով պարունակութիւնը կը տեսնուի և այս կերպով խարդախութեանց առաջքը կ'առնուի. Այս գիւտ մասնաւորապէս կրնայ օգտակար ըլլալ չոր պտուղներու արտածութեան համար.»

Կայս. կառավարութիւնը տեղեկանալով որ Զուիցերիոյ մէջ պատրաստեալ կեղծ մէճիտիյէներ ի Թուրքիա կը բերուին, հարկ եղած միջոցները ձեռք առած է այդ կեղծ դրամներու մուտքն արգիլելու համար.

—Առողջապահական վարչութեան հաշուակալ [illegible] էֆէնտի հանգստեան կոչուած և իւր յաջորդ անուանուած է առողջապահական ժողովոյ անդամներէն Մուրշիտ էֆէնտի.

—Կը յիշուի թէ անցեալ տարի հելլէնական [illegible] շոգենաւուն նաւապետ Պ. Ամպաթճիօս՝ պուլկար աւազակներ առած լինելով իւր նաւուն մէջ, եւ զանոնք Պուրկազ փոխադրած լինելով, վերադարձին ձերբակալուած և օսմանեան հողէն արտաքսուած էր. Արդ Թուրքիոյ և Յունաստանի միջեւ բարեկամական բարւոք յարաբերութեան հաստատմամբ, Վեհ. Սուլթանն հաճած է ներումն շնորհել Պ. Ամպաթճիօսի կ. Պոլիս վերադառնալ.

—Քաղաքապետութիւնը նկատողութեան առնելով մէկ քանի օրէ ի վեր Պոլսոյ կողմը տիրող անուշ ջուրի նուազութիւնը սկսած է նորոգել Քիւչիւք քէօյի ջուրի ճամբան որ աւրուած էր.

—Էվգաֆի նախկին Միւֆէթթիշ Ահմէտ [illegible] էֆէնտի նախընթաց օր յանկարծամահ եղաւ սրտի հիւանդութենէ.

—Ոստիկանութիւնը շաբաթ օրն հեռաւոր վայրեր աքսորեց ութը չարագործներ.

—Քաղաքապետութիւնը հրահանգ ուղղեց որոց որ անկ է ուշադրութիւն ընել որպէս զի սպանդանոցներու մէջ յղի անասուններ չմորթուին.

—Արշիպելագոսի կղզեաց նահանգին Մէարիֆի տնօրէն անուանուած է կրթական նախարարութեան քննիչ ժողովոյ անդամ Մահմուտ Ճէլալէտտին էֆէնտի.

—Ոստիկանութիւնը շաբաթ օրը մէկ քանի անձինք ձերբակալեց որք աւստրիական Տանուբ շոգենաւը փոխադրել կ'աշխատէին փախստեայ ըէվոլվէր և փամփուշտներ պարունակող երկու սնտուկ ինչպէս նաեւ այդ զէնքերու գործածութիւնը բացատրող երկու գիրք.

—Մուսուլի Մէարիֆի հաշուակալ անուանուած է Տիգրանակերտի Մէարիֆի ժողովոյ առաջին քարտուղար Ղալիպ էֆէնտի որ արձակուրդով մայրաքաղաքս կը գտնուի.

—Լը Թէմփի Սելանիկի թղթակիցը վերապահութեամբ կը գրէ թէ Դատական Նախարարութեան և Ֆէներ Պատրիարքարանի միջեւ կատարուած բանակցութեանց վրայ, նահանգին կուսակալն հրահանգ ստացեր է թոյլ տալ որ մետրապոլտական ժողովոյ ընտրութիւնք կատարուին Սինոդին կողմէ նախապէս որոշուած եղանակաւ, որուն դէմ դժուարութիւնք կը յարուցուէին.

—Սուրիոյ Իտարէի ժողովը դատելով նահանգին կեդրոնական արկղակալ Մէհմէտ էֆէնտին, որ 7000 ղրուշի չափ գումար մը իւրացուցած էր, եռամսեայ բանտարկութեան և իւրացուցած գումարին հատուցման դատապարտած է. Մէհմէտ էֆէնտի այս վճիռը չընդունելով վերաքննութեան դիմած է.

—Վերջին օրերս Ազովու ծովուն մէջ սաստիկ փոթորիկ մը ծագած լինելով, չատ մը վաճառաբերձ նաւեր ընկղմեր են, մի քանիներուն նաւաստիքը միայն կրցած են ազատիլ և ողջամբ մայրաքաղաքս հասած են Սեվաստոպոլէն եկող ռուսական թղթաբեր շոգենաւով. Ընկղմեալ նաւերուն մէջ կայ եղեր նաեւ հելլենական առագաստանաւ մը, Մանրամասն տեղեկութիւնք կը պակսին.

—[illegible] կը գրեն թէ տեղւոյն տասանորդի տրոց վարձակալութիւնն այս տարի 8,000 ոսկւոյ աւելութիւն մը ունեցեր է, շնորհիւ աչալրջութեան կառավարիչ Պէքիր փաշայի.

—Անցեալ օր ի Պոլիս Զընտան Քափուսի անցնող թուրք բեռնակիր մը կառքի մը անիւներուն տակ մնալով վիրաւորուեցաւ. Բեռնակիրն անմիջապէս հիւանդանոց մը փոխադրուեցաւ.

— Ներքին գործոց նախարարութիւնը շրջաբերականաւ մը մեկնած է ինչ ինչ տրամադրութիւնքն այն Հրահանգին որ կը վերաբերի ուղիներու շինութեան համար ժողովրդեան մասնակցութեան. Ամեն ընտանիքէ պարտի անձամբ կամ փոխանորդի մը միջոցաւ մասնակցիլ ճամբաներու շինութեան. Մինակ, իմամները, քրիստոնեայ քահանայք, հրեայ ռաբբինք, ինչպէս նաեւ անկարք և զինուոր ներքեւ գտնուողներն ազատ են այս պարտականութենէն. Պետական պաշտօնատարք, և այս ճիւղին մէջ կը հաշուին նաեւ հեռագրատան պաշտօնեայք, նոյնպէս ենթարկեալ են այս պարտականութեան.

—Անցեալ գիշեր Հասան անուն չարագործ մը ի Պոլիս Հօճա Փաշա թաղը [illegible] մը վարի յարկի պատուհանը կոտրելով ուզած է ներս մտնել եւ կանանց վրայ բռնանալ. սակայն կանայք աղաղակելով ոստիկանք օգնութեան հասած եւ ձերբակալած են այդ մարդը.

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

Շաբաթ գիշեր Լը Բըթի Ֆօսթի ներկայացումն, որ խեղկատակեալ նմանութիւն մ'էր Կունոյի Ֆաուստին, երեք զբօսալի ժամեր անցունել տուաւ Նոր Թատրոնի հանդիսականաց որք սակաւաթիւ չէին. Ամբողջ խաղը չարք մ'էր զուարճալի տեսարաններու, ծիծաղելի խօսքերու, բառախաղերու, հեգնութեանց, կատակներու, և սկիզբէն մինչեւ վերջը քրքիջներով լեցուց սրահն ողջոյն. Դերասանք և դերասանուհիք, գլխաւորաբար Օրիորդք Իվանոֆ և Կրանիէ և Պ. Պ. Մանօէլ, Պօնէլլի ու Ժանժառա կարելին ըրին լաւ կատարելու համար իրենց դերերը.

Իսկ Գոռնըվիլի Զանգակներն, որ ներկայացուեցաւ երէկ գիշեր, Բլանքէթի այն սիրուն օփէրան է, որուն ո՛չ միայն նիւթը պատմած ենք անցեալ տարի, այլ եւ պատրաստութեան եղանակին ու հեղինակին վըրայ կարգ մը չահեկան ծանօթութիւններ հրատարակած ենք նախընթաց տարին. Ուստի աւելորդ է խօսիլ խաղին վրայ. Ներկայացումը բաւական յաջող էր, թէև եղան որք փնտռեցին տիկին Սլիս Բինէն ու Օրիորդ Վրօլին. Երէկ գիշերուան ներկայացման փայլն ամենէն աւելի աւելցուցին Պ. Մազօթի՝ մարքիզի դերին մէջ՝ եւ Օրիորդ Իվանոֆ՝ Սէրբօլէթի դերին մէջ. Օր. Քէմփիս եւս որ սոսկ ի հաճոյականութիւն (par complaisance) կը կատարէր Ժէռմէնի դերը, ցոյց տուաւ թէ իրեն յատուկ դերէն տարբեր դերերու մէջ եւս գիտէ գնահատուիլ.

Վաղը (երեքշաբթի) գիշեր առաջին անգամ ներկայանալի.

ՀԱՐԻՒՐ ԿՈՒՍԱՆՔ
LES CENT VIERGES
Օբէրէթ երեք արարուածով
Երաժշտութիւն Լըքօքի

ԱԶԴ

Նախորդ վկայեալ ուսումնաւոր Հայկազեան Կրթարանի և Համիտիյէ Առեւտրական բարձրագոյն վարժարանի՝ պատրաստ տուներու մէջ և մասնաւորաց դաս տալ հայ, թուրք և ֆրանսերէն լեզուաց. փաստաթղթաց, գիտութեանց, ուսողութեանց և Առեւտրական գիտելեաց դասախօսութիւնք եւս կրնան տրուիլ. դիմել Արեւելքի խմբագրատունը.

1285 1—5

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՍԴԱՆԼԻ ԵՒ ԷՄԻՆ ՈՂՋ ԵՒ ԱԶԱՏ

Լոնտոն, 21 դեկտ.

Երեսփոխանաց ժողով. — Ելմտական նախարար Գ. Կոշըն երեկոյին Երեսփոխանաց ժողովոյն հաղորդեց Ռոյթըրի Թէլէկրաֆ Գումբանիի մէկ հեռագիրն որ կը ծանուցանէ թէ Էմին փաշա Սդանլիի հետ հասած է Յամբիմբի. «Կը հաստատենք թէ, կ'ըսէ հեռագիրն, այս լուր վաւերական է»։ ([illegible])

Հռոմ, 23 դեկտ.

Երեսփոխանաց ժողովը, քուէարկելէ յետոյ զինուորական վարկերն, իր նիստերը դադրեցուց մինչեւ 15 յունվար։

Հռոմ, 22 դեկտ.

Երեսփոխանաց ժողովը, զինուորական վարկերու վիճաբանութեան միջոցին, 45ի դէմ 231 ձայնով ընդունեց առաջարկ մը որ լռելեայն կը հաւանի նախարարութեան աշխարհավարութեան։

ԴՐԱՄԱԿԱՆ

Ղալաթիա, 12 դեկտեմբեր

Դահեկան

ԸՆԹԱՑԻԿ ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐՔ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110 3/8
3 » » » (վաճառականին)	110
3 » Բարիզի » (պանքայի)	22 97 1/2
3 » » » (վաճառականին)	23

Օսմանեան Թահվիլք

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Դ. Սէրի	16 11
Գորայլին գոցուելէն վերջը »	16 11
Առաւօտուն բացուեցաւ » Գ. կ.	16 16
Կէս օրին » »	16 16

[illegible]

Երէկ երեկոյ	40 10
Այս առաւօտ Գ. կ.	38 10
Կէս օր »	38 10

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԷՔՆԵՐ

Փոխառութիւն Ա Սէրի Գ. կ.	25 10
» Բ » »	15 25
» Գ » »	16 16

ԲԱԺՆԵՏՈՄՍ

Սօսիէթէ Ժէնէրալ ... Անգլ. Լր.	4 18
Գրէտի Ժէնէրալ ... Օսմ. »	8 25
Պանք տը Գօնս » »	7 4
Փօս. Շանժ է վալէօր » »	4 30
Թրամվէյ » »	455
Րումէլի երկաթուղի ... Ֆր.	46 3/8
Բաժնեթուղթ Լաւրիոնի »	126

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի ... Ղրշ. ...	100
20 Ֆրանքնոց » ...	87 35
Անգլիական ոսկի » ...	110 32
Իմփէրիալ » ...	91 30
Քրքիտ » ...	51 10
Բուլիթ թղթադրամ » ...	8 88
» արծաթ » ...	77
Մաճ. արծ. (տարբ.) » ...	108 33
Վէշլիկ » ...	102 30
Չէյրէկնոց » ...	102 30
Մէթալիք » ...	102
Թումֆէյք » ...	10 20

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 22 Դեկտեմբեր ժամ 5 վայր. 15 երկվ.

Անգլ. քոնսոլիտէ	96 1/4
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ	14 3/4
» » » գոցուեցաւ	14 3/4
» » » Ա.	25 1/8
» » » Բ.	15 1/8
» » » Գ.	14 5/8
Օթոման 1871	82 1/4
Փոխառութիւն 1877	94 1/4
Պանք Օթոման	11
Ռուսական փոխառ. 1873	99 3/8
Եգիպտական միացեալ (ունիֆիէ)	82
» առանձն. (բրիվիլէժիէ)	100 3/4
Տայրա Սանիէ	78
Տօմէնիալ (փոխառ. Ռոչիլտ)	100 1/4
Հանգարական պարտաթուղթ 4 %	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 674

Վիեննա, 22 Դեկտեմբեր ժամ 4 երկվ.

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 60
Օսմանեան երկաթուղի	22 20

Բարիզ, 22 Դեկտեմբեր ժամ 3 վայր. 45 երկվ.

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	104 22 1/2
» » 3 %	82 80
Օսմանեան քոնսոլիտէ Սէրի Դ. բացուեցաւ	14 97 1/2
» » » գոցուեցաւ	15 10
» » » Բ.	15
» » » Գ.	15
Օսմանեան երկաթուղի	46 (*)
» Րէժիի բաժնեթուղթք	— —
Պանք Օթոման	521 37 1/2
Գրէտի Լիոնէ	613 75
» Ֆօնսիէ	1365
Բաժնետոմս Լիոնի	1277 50
Սուէզի ջրանցք	2198 75
Ռուսական 5 % 1877 ի	103 7/8
Իտալական Ռանթ	96 70
Սպանիական (արտաքին)	73 1/4
Եգիպտական միացեալ ... գ. ք.	418 75
Բրիօրիթէ Թիւրք	413 75
Հելլենական 5 %	428 75
Չէք Լոնտրայի վրայ	25 34

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 22 Դեկտ. ժ. 10 վ. 30 երկվ.

Ֆրանսական Ռանթ 3 1/2 %	82 81 1/4
Օսմանեան քոնսոլիտէ	15 10
Եգիպտական	418 75

«ՄՇԱԿԸ» ՎՆԱՍԱԿԱՐ Է

Այն օրից, երբ Մշակը սկսեց հրատարակվել, Ռուսաստանի հայոց ամբողջ մամուլը հետզհետէ այն միտքն էր կրկնում, որ Մշակը վնասակար է. Ոչ մի օրգան մեզանում հակառակը չասեց, և դա շատ հասկանալի է, քանի որ Մշակին ժամանակակից ոչ մի օրգան չունեցանք, որը հոգով և սրտով չը պատկանէր յետադէմ և խաւարամիտ բանակին.

Ուրեմն ամբողջ հայոց մամուլի վճռով, սկսած 1872 թւից մինչեւ այժմ, Մշակը վերին աստիճանի վնասակար օրգան հռչակվեց։

Այդ կողմից պէտք է խոստովանվել, որ մեր հայոց ամբողջ մամուլը շատ յաջորդաբար է վարվել միշտ և շարունակում էլ է յաջորդաբար վարվել. Եւ ճշմարիտ, զարմանալի կը լինէր որ այն մամուլը, որը միշտ պաշտպանել է և պաշտպանում է ամեն տեսակ յետադիմութիւն, — յանկարծ ասէր որ Մշակը օգտակար է.

Այո՛, չէ կարելի անկեղծ կերպով չը խոստովանվել, որ տասն և վեց տարվայ ընթացքում հայոց ամբողջ մամուլի բոլոր եղած և այժմ գոյութիւն ունեցող օրգանների ասածը. թէ Մշակը վնասակար է, — կատարելապէս ուղիղ է։

Մշակը վնասակար է յետադէմ և խաւարամիտ մամուլի համար և այդ մամուլի այն օրգանները ղեկավարող անձնաւորութիւնների համար, որոնք խմբագրում են հրատարակութիւններ իրանց անձնական նպատակների համար, ուրեմն համեմատ բոլէական պահանջի՝ պէտք է և փոխեն իրանց ուղղութիւնը, կարծիքները, սկզբունքներն ու համոզմունքները.

Մշակը վնասակար է այն բոլոր հայերի համար, որոնք լուսաւորչական լինելով, հալածում են իրանց այլադաւան ազգակիցներին.

Մշակը վնասակար է այն բոլոր հարստահարողների, վաշխառուների, խարդախ թղթախաղով հարստացածների, կեղծ թղթադրամ շինողների համար, որոնք հարստանալուց յետոյ, իրանց կարողութեան փշրանքներ են շպրտում ազգին, որոնք ամեն տեսակ աններելի միջոցներով հարստանալուց յետոյ, ազգի բարերարներ են հանդիսանում.

Մշակը վնասակար է այն բարձրագոյն համալսարանական ուսում ստացածների համար, որոնք դիպլոմը գրպանում, իսկ ուսումնական տիտղոսը ճակատին, ուզում են մեզ ստիպել իրանց անձի առջեւ երկրպագել, չը նայելով որ իրանց մտաւոր և բարոյական զարգացմամբ ստոր են վերջին ռամիկից.

Մշակը վնասակար է տգիտութեան, նախապաշարմունքի և սնոտիապաշտութեան համար, Մշակը վնասակար է հնացած մտքերի և հնացած վարդապետութիւնների համար.

Մշակը վնասակար է տգէտ բժշկների և դատարկախօս, ճշմարտութիւնը յեղաշրջող և արդարութիւնը խախտող իրաւաբանների համար.

Մշակը վնասակար է ղեղծումներ գործող, հաշիւ չը տուող երեսփոխանների համար.

Մշակը վնասակար է կաշառակեր, գող և յափշտակող մարդկանց համար.

Մշակը վնասակար է բռնաւոր եւ իրանց զաւակներին ճնշող ծնողների համար.

Մշակը վնասակար է իրանց մայրենի լեզուն արհամարհողների և ատողների համար.

Մշակը վնասակար է բոլոր անարժան հասարակաց պաշտօնեաների և անարժան գործիչների համար.

Մշակը վնասակար է առողջ միտքը մոլորեցնող, ճշմարտութիւնը յեղաշրջող և հասարակաց կարծիքը անբարոյականացնող հասարակաց գործիչների, հրապարակախօսների համար.

Մշակը վնասակար է անտարբեր, ծոյլ մարդկանց համար, վնասակար է իրանց անձնական շահերը հասարակաց շահերից բարձր դասող մարդկանց համար.

Մշակը վնասակար է հասարակաց գումարները կլանող անձնաւորութիւնների համար, նա վնասակար է գիւղական ժողովուրդը կեղեքող վաշխառուների և չարչիների համար, ինչ ազգութեան և պատկանէին նրանք....

Մշակը վնասակար է այն մարդկանց համար, որոնք ընդդէմ են եկեղեցու վերանորոգութեան.

Մշակը վնասակար է հին լեզուի պաշտպանների և նոր հայոց աշխարհաբարի բազմակողմանի զարգացման հակառակորդների համար.

Մշակը վնասակար է այն մեր բոլոր ընկերութիւնների համար, որոնք ոչինչ չը շինելով և անդորր քնի մէջ մնալով, շարունակում են կրել ընկերութիւնների լոկ անունը.

Մշակը վնասակար է այն դասակարգերի համար, որոնք աշխատելով կենտրոնացնել իրանց ձեռքում ամեն բան, զրկում են հայ ժողովրդին իր բոլոր իրաւունքներից.

Մշակը վնասակար է այն բոլոր հնացած հայեացքներին, որոնք արգելք են դնում հայ կնոջը ազատ կերպով զարգանալու և իր ինքնուրոյն անկախ աշխատանքով մարդավայել հասարակաց դիրք ստանալու.

Մշակը վնասակար է բոլոր սուտ ազգասէրների, հոսոնների, կոյր գործիք պաշտօնատարների, էժանագին բարերարների և ժողովրդի արիւնը ծծող աղաների համար.

Վերջապէս Մշակը վնասակար է բոլոր հին կարգերի, հին ուղղութեան երկրպագուների համար, վնասակար է նորութիւն, վերանորոգութիւն, ճշմարիտ նոր, թարմ և առաջադէմ ոգի ատողների համար....

Մեր խօսքը չերկարացնելու համար, վերջացնում ենք մեր ասածները պարզ և անկեղծ խոստովանութեամբ, որ մեր հակառակ մամուլի տարիներից ի վեր յայտնած կարծիքները Մշակի վերաբերմամբ շատ ճիշդ և ուղիղ են...

Այո, Մշակը իր գոյութեան ամբողջ ընթացքում միշտ վնասակար է եղել, վնասակար է և այժմ և կը լինի էլ միշտ վնասակար, ինչքան ժամանակ էլ գոյութիւն կունենայ. Գ. Ա.

(Մշակ)

ԹՄԲՐԵՑՈՒՑԻՉՔ

ՏՐ. ՊՈՐՏԻԷԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Ալքոոլի համար չստերու ունեցած ազէրն՝ ոմանք եւս ունին կոկայ (coca) կոչուած տունկին տերեւներուն համար.

Երբ Պիզար յաղթեց Բերուի Ինգաներուն կայսրութիւնն, կոկաներն՝ ուր կը մշակուէր կոկայն՝ մեծամեծաց և քրմաց մենաշնորհն էին որով իրաւունք ունէին շահագործելու թանկագին տունկն. Սպանիացիք չ'մոռցան յօգուտ ի կիր առնուլ կոկայն բոլոր այն աւերակաց բեկորներէն որոց մէջ հարստութիւն կը փնտռէին. Այս տունկին տերեւներով արքունի տուրքն վճարուեցաւ ժամանակ մը Սպանիացւոց. Կիւզգոյի մայրեկեղեցւոյն եպիսկոպոսին և կանոնիկոսաց եկամուտքն այս տերեւներու տասանորդէն կը վճարուէին. Նոյն պահուն ոչ սակաւ Սպանիացիներ շատ մեծ հարստութեանց տէր եղան այս տնկոյն վաճառականութեամբն. Տնկոյն համբաւն երթալով յառաջադիմեց և կրօնական հալածանաց դրոշմն իսկ ունեցաւ. Ամէն տեսակ արգելքներու հակառակ՝ կոկայի տերեւոց վաճառականութիւնն դեռ յոյժ կարեւոր է և հունձքն այսօր կը հաշուուի տարին 25 միլիոն. 1850ին Պոլիվիոյ կառավարութիւնն կոկայի մաքս ստացանէն 900,000 ֆրանք. 1859ին այս թիւն բարձրացած էր 1,500,000 ֆրանքի, քինքինայի մաքսէն աւելի որ նոյն թուականին նոյն երկրին մէջ 710,000 ֆրանք էր, օղիին եւ շաքարին մաքսէն եւս աւելի որ 1,370,000 շահ կը բերէր.

Ինչ էր ուրեմն այս գրեթէ նուիրական անկոյն կարեւորութիւնն. Կոկայն այնպէս էր առ նոսա ինչպէս այսօր ծխախոտն առ մեզ. Խիստ հնացեալ սովորութիւն մ'էր, Ինգաներուն շահու անսպառ աղբիւր մը և ծխախոտին հակառակ օգտակար սովորութիւն մ'էր. Տերեւը գործածելու եղանակն էր եւ է դեռ առ Հնդիկս ծամել զայն. Հնդիկն իր չէսպայն (տեսակ մը պարկ) մէջ կը կրէ արեւուն դէմ չորցած քանի մը տերեւներ, այս տերեւներուն միջնակայ նեարդն հանելէ վերջ, քանի մը հատն կառնու և կ'ոլորէ իբրեւ գնդակ որոյ կեդրոնն դրած է ուրիշ նիւթ մը՝ լլիպթա. Այս լըլիպտան որ կոկային կը միանայ, կալաքարային և երբեմն կրային բաղադրութիւն մ'է, ի մի բան, քանի մը տնկոց աճիւնն զորս կը վառեն այս բանին համար, զոր օրինակ, պանան որոյ տերեւներն կ'այրեն. Հնդիկն ծամելէն յառաջ եկած լորձունքն եւս կը կլանէ. Երբ գնդակն իր յատկութիւններն կորուսանէ, ուրիշ մը կը շինուի և այսպէս շարունակաբար. Վերջապէս գիշեր ցերեկ Հնդիկն իր բերանոյն մէջ ունի միշտ կոկայն և օրն կ'սպառէ 28-42 կրամ. Եւս կամ ուրիշ տեղ չերթար բնաւ առանց կոկային, ինչպէս Ստիրիոյ գիւղացին առանց զառիկի (arsenic), եւ կը քալէ այսպէս առանց յոգնութեան և սնունդի. Առանց այս թանկագին տերեւոյն չ'ապրիր կրնայ, կ'ըսէ, դիմադրել Սորոչին. Ժամանակակից ուղեւորք հաստատած են թէ իրենց առաջնորդներն Անդեան լերանց մէջ զարմանալի արշաւներ կ'ընէին՝ գրեթէ առանց ուտելու, այլ անդադար ծամելով զկոկայն. Հնդիկն 180 հազարամեթր կ'ուղեւորի օրն առանց սնունդի, ծամելով միայն կոկայն. օրն 14 կրամ տերեւն կը բաւէ 5 օր անսուաղ մնալու. Ասոր կը հետեւի թէ տերեւին գնումն Հնդիկին ամենէն մեծ ծախքն է. Տասն տարեկանէն սկսեալ կոկայ կը փնտռէ, իւր հօրմէն գաղտնի կը պահէ. Կանայք ծերութեան ատեն կը գործածեն կոկայ. Կը տեսնուի որ կոկան՝ այսպէս կը կոչուի կոկային սպառիչն՝ մեծ աղերս ունի ծխախոտի սիրահար Եւրոպացւոց հետ. Ծամուած տերեւներուն վրայ բացառութիւն մը կայ միայն, կը հաւաստեն թէ հինցած տերեւներն թանկագին բժժանք կը համարուին եւ սովորաբար կան կոկայի կոյտեր աստ և անդ Աստուածութեան ուշադրութիւնն հրաւիրելու համար. Մինչեւ մեր դարն այս բոյս եղաւ կոկայի գործածութեան մասին ծանօթ եղած տեղեկութիւնն. Արեւադարձային Ամերիկայի մէջ նօթութիւնն հանդարտելու միջոց մը համարեցաւ. Կոկայն կը ծաղի Բերուի՝ Պոլիվիոյ մէջ, ի Նոր-Կրենատա, ի Հասարակած և Պրեզիլիոյ քանի մը գաւառաց մէջ.

Ներելի է կոկային գրգռիչ յատկութեանց մերձեցուցանել տունկի մը նմանօրինակ յատկութիւններն որ հարաւային Ամերիկայի մեծ մասին մէջ մեծ համբաւ կը վայելէ. այս տունկն է Եէրպա. տերեւներուն խմորումն կը պատրաստուի յատուկ դդմոյ մը մէջ որ մաթէ կը կոչուի, ուստի սովորաբար տունկն իսկ մաթէ անունն առած է. Այս ծառն մեծ առատութեամբ կը գտնուի ամբողջ Պարակուէյի, Մեծ-Ռիոյի, Պարանայի և Ս. Կատարինէ գաւառաց մէջ. Տերեւներն հիմնական մասն կը կազմեն հարաւային Պրեզիլիոյ երեք գաւառաց սննդառութեան, Արժանդինի հանրապետութեան, Չիլիի, Բերուի, Պոլիվիոյ մէկ մասին. Պրեզիլիոյ մէջ գաւառն միայն Պարանա ամեն տարի կ'արտածէ գրեթէ 15,000,000 հազարակրամ, ամբողջ Պրեզիլիա ամեն տարի կ'արտածէ 30,000,000 հազարակրամ կամ 300,000 մեդրական կենդինար. Պարակուէյ թէեւ քիչ կ'արտադրէ, այլ իւր մաթէն յարգի է. Եթէ Պրեզիլիոյ և Պարակուէյի արտածմանց վրայ յաւելումք նաեւ մասնաւոր տեղեաց մէջ մշակուած մաթէին քանակութիւնն, հարկ է 500,000 մեդրական կենդինարի վերածել այս սննդեան տարեկան սպառումն. Բոլոր այս երկրաց մէջ մաթէն կը փոխանորդէ սուրճն, թէյն, ալքոոլն, միակ ըմպելին այս է և չկայ տուն մը ուր մաթէ դդումն եէրպայի բուսաբրով թամամ զուն՝ չ'ըմպագայի ընտանեաց անդամոց ձեռաց մէջ խմելու համար արծաթեայ փողրակով մը. Կանայք օրն կ'սպառեն մինչեւ 10—12 թաս.

Ինչ որ Ամերիկացիք կը պահանջեն կոկայէն և մաթէէն, Հարաւային Ափրիկէի ժողովուրդք զնոյն կը պահանջեն Քոլայի ընկուզէն կամ Կուրուէն կամ Օմբէէն. Այս բոյսն տարածուած է Սենեկալի կողմերը՝ Սիէրա-Լէոնէի կաղմնի մէջ, Ափրիկէի արեւմտեան ծովափանց մէկ մասին վրայ. Իւր հունտին բլթակներն (cotylédon) յառաջ կը բերեն թէ իւէժ և թէ յարգի սրնունդ մը ըստ գիտողութեանց Զվիֆէլի և Մուսդիէի որոց կ'ընծայէին ընիկք Քոլայի ընկոյզն ի նշան բարեկամութեան. Բնակիչք կը գործածեն զայն ախորժահամ և զով ընծայելու համար ամենէն ապտաղտուկ և նեխեալ ջուրն. Հէկէլ և Շլակտէնհաֆըն այս բլթակաց վերլուծութեան մէջ գտած են գրգռիչ՝ զօրացուցիչ և սիրարծարծ յատկութիւն.

Ամբողջ Պոլինեզիոյ մէջ զանազանակ հանոյք և զբօսանք կ'զգան ըմպիկ գործածելով ֆէֆէն որ կ'արտադրէ տաֆամ, մանաւանդ Ընկերութեան կղզեաց մէջ. Վալիսի արշիպեղագոսին Սամոա՝ Վիտի՝ Սանտուիչ՝ Մարկիզեան՝ Տոնկա կղզեաց մէջ Փիփէրի արմատներն կ'առնուն և ինչպէս ի Ֆորմոզ կանայք պաշտօն ունին զայն ծամելու, անոնց բլիկներն կոտրելով և լորձունք յառաջ բերելու համար որ յետոյ մեծ դեր ունի կտտաղէ խմորման մէջ. Մեծ ամանի մը շուրջ բոլորեալ կանայք տակաւ առ տակաւ կը ծամեն փիփէրն որ կ'արտադրէ իր նոսա տասատ լորձնահոսութիւն, Լորձունքն և արմատն հասարակաց ամանի մը մէջ կը ձգեն, և ապա ջուր լնցնելով մասնաւոր խմորեալ ըմպելի մը կը լինի, որ է քավա-քավան.

Այս ըմպելին կուտայ փառահեղութիւն, ազդուութիւն, համարձակութիւն, ուժգնութիւն. 300—400 կրամ չափով զուարթն կը տեսնուի դիմաց դեղնութիւնն, երակի զարկի նուազումն, սաստիկ դրգռումն. 600—700 կրամով ընդհակառակն յառաջ կուգան անզգայութիւն և 12-15 ժամ քուն. Դիւրին է վարժուիլ այս հեղուկին և Եւրոպացիք ոմանք ամեն օր կը գործածեն 900—1,000 կրամ. Ըստ Տր. Մէյէրի հանդարտեցուցիչ դեղ մ'է որոյ արդիւնքն է զգայունութեան և շարժաղանութեան քնաբեր վիճակ մը.

Այլ քավայի վաղեմի սիրահարք յաճախ կ'ունենան տարտամ քոլուածք, սովորական դեղեւումն, խօսելու դժուարութիւն, գլխացաւն շարունակական կը լինի, այլ իմացականութիւնն բացարձակապէս արթուն կը մնայ.

Այս գրգռիչ դեղոց հարկ է յաւելուլ զայն զոր Աւստրալիացին կը փնտռէ իւր ուղեղային յուզմանց համար, պիտուրիի տերեւներն. Բնիկք կը ծամեն այս տերեւներն քաջասիրտ լինելու համար. Եթէ չափազանց լինի քանակն՝ տեսլատեսական մոլեգին կ'ընէ զմարդ, յայնժամ կ'դգուէ ցնորք, բանդագուշանք, երազներ, աչաց բբին տարօրինակ ծաւալումն.

Հարկ է բարձրանալ ի հին ժամանակս հնդկէկ կանեփին նշանաւոր գործածութեան ծագումը գտնելու համար. Սկիւթացիք, կ'ըսէ Հերոդոտոս, կ'առնուն կանեփի հունտը, կը մտնեն ցիցերու տակ զոր կը պատեն իրենց վերարկուներովն և հրշէկ ջեռուցեալ քարանց վրայ կը ձգեն հունտը. Կ'սկսի անմիջապէս ծխալ և հելլենական տաշտէն աւելի առատ շոգի կը տարածէ. այս շոգիներէն գրգռուած՝ կ'սկսին գոչել և կաղկանձել։ Դուրս եկած շոգիներն այն շոգիներն են յորոց այսօր հաշիշ ուտողը կամ ծխողը կը խնդրեն վաղեմի Սկիւթացւոց փափաքած գրգռումը. Կը գործածէին զայն կրօնական արարողութեանց ատեն.

Սկիւթացւոց երկրէն այս նորաձեւութիւնն անցաւ ի Պարսկաստան, ի Սիւրիա ուր Հասան Սեպահին իւր Հաշիշեան ցեղին հետ նշանաւոր ըրաւ այս նորաձեւութիւնն. Անոր յետոյ ուր կը ծխեն հաշիշն և կ'ուտեն զայն կանաչորակ պնակիտներու (tablette) ձեւով, անախորժ ճաշակաւ, լեռնալ և եփուած կանեփին հետ խառնելով 50 % կարագ, մուշկ, մշկընկոյզ, վարդ, քերքուեմ, մեղր, մեխակ. Բաւական է կլանել այս զանգուածէն կաղինի մեծութեամբ կտոր մը ազդեցութիւնն իմանալու համար. Այս պատրաստութիւնք [illegible] անունը կը կրեն, ի Գահիրէ [illegible], և յԱրաբիա [illegible]. Երբեմն կը գործածեն ծաղկելէն վերջ չորցած տունկն, որոյ խէժը կամ խմորն հանուած չէ. երբեմն վերջապէս բուն հաշիշը, ծաղկելէ յառաջ տունկին փափուկ և վերին մասերն կազմուած. Ժողովուրդը կ'սպառէ հաւասարապէս ալքոոլական հեղանակ մը և տունկին ծաղկանց փոշին կը ծխէ նարկիլէով. Առաջին պարագայից մէջ կանեփին ուղեղային դրութիւնը կը գրգռէ, նախ կ'զգացուի առողջութեան շարժումն, յետոյ ճնշում մը քունքերուն վրայ, ձեռաց ջղաձգութիւն մը, մեղմ ջերմութիւն մը, ապա ուղեղին մէջ եռացման զգացողութիւն մը, ականջի ձայներ եւ կծկող մկանանց բազմաթիւ լորձեր (spasmes). Ի սկզբան ախորժակն կը բանայ եւ [illegible]. Չափազանց գործածութիւնն յառաջ կը բերէ անզգայութիւն և ուշաբերձութիւն (catalepsie). Յաճախ կուտայ հաճելի բանդագուշանք, ջղաձգական քրքիջներով, այլ երբեմն կը մոլեգնոտէ և կը մղէ ի մարդասպանութիւն. Սկիւթացիք կը մռնչէին, ինչպէս տեսանք. Հաշիշի գործածութիւնն տակաւ կ'սկսի տարածուիլ մահմետական երկրաց մէջ որոց արգիլեալ է ալքոոլն. Ըստ Պէրդըրանտի, այժմ Ալճէրիոյ մէջ վաթսունէ աւելի հաշիշի վաճառականներ կան. (Մնացեալը յետոյ)

ԵՐ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՃԱՇԱԿ

ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ԾԱՂԿԱՔԱՂ ՇԱՐԱԴՐԻ ԿՏՈՐՆԵՐ
Հանդերձ կենսագրական, Պատմական, Դիցաբանական եւ Աշխարհագրական ծանօթութեամբք

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՓՈՓՈԽԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ
Աշխատասիրութեամբ՝ Ա. ՊԻՊԼԻՔՃԵԱՆԻ

Սոյն ընտրելագոյն հաւաքածոյին Գ. տպագրութիւնն հրատարակուեցաւ և կը ծախուի ամեն գրավաճառաց քով.

Գինն է	Ա. Մասն	—	5 ղրշ.
	Բ. »	—	7 »
Երկուքը միասին		—	12 »
» »	Լաթակազմ		15 »

Դպրոցներու մեծ զեղչ կը տրուի.

2205 9—10

ԱԶԴ

1. Բերա Գամէր խաթուն թաղ Գալեօնճը գուլլըղը փողոց թիւ 97 քարուկիր տունը, որ 190 կանգուն գետին ունի և տարին 70 լիրա վարձք կը բերէ, 800 լիրայի.

2. Ղալաթիա Պէրէքէթ Զատէ թաղ Ջիւրէքճի փողոց թիւ 8 քարուկիր տունը, որ 104 կանգուն գետին ունի և տարին 36 լիրայ օսմ. վարձք կը բերէ, 300 լիրայի.

3. Ղալաթիա Սուլթան Պայէզիտ թաղ Գապուգ Չըքմազ և Սուլթան Պայէզիտ փողոցները թիւ 1 և 51 քարուկիր տունն և խանութն, որ 70 կանգուն գետին ունին և տարին 60 լիրայ օսմ. վարձք կը բերէ, 600 լիրայի.

Վերոյիշեալ կալուածներն՝ որ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վագֆէն լինելով մահլուլ մնացած են, որոշուած է աճուրդի դնելով վաճառել։ Արդ անոնք որք կը փափաքին աւելի գնով ծախու առնուլ, կը հրաւիրուին ներկայանալ ամեն երկուշաբթի և հինգշաբթի օրերն առաւօտները նոյն եկեղեցւոյ կալուածոց մատակարարութեան սենեակը։

28 սեպտ. 1888 2134 13—16

ՏՈՔԹՈՐ ՋՕՀՐԱՊ

Բժիշկ Շիշլիի գաղղիական Լա-Բէ հիւանդանոցին, վաղեմի ներքին բժիշկ Լիոնի եւ Սէնդ Էդիէնի հիւանդանոցաց (ի Գաղղիա), թղթակից անդամ Լիոնի բժշկական ազգային ընկերութեան, մասնագէտ Ականջի Կոկորդի եւ Քթի հիւանդութեան. Ներքին եւ ելեկտրական դարմանից, այցելութիւնք կ'ընդունի առաւօտներն (ժամ 10 էն 12) իւր տունն որ ի Մեծ փողոց Բանկալթիի թիւ 75, կէս օրէն վերջ ի Սգամպոլ Պահճէ գարու Մէրճամէքճեան դեղարանն թիւ 18, ուր ուրբաթ օրերը ձրի կը դարմանէ. 1699 22—81

ՏՕՔԹԼՕՌ ՏԱՏՈՒՐ

ՄԱՍՆԱԳԷՏ կոկորդի, ականջի, քիթի, բերանի և վզի ամեն տեսակ հիւանդութեանց, Վ. ԿԱՅՍԵԱԼ Փարիզի, Լոնտրայի և Վիէննայի նշանաւոր մասնագէտ դասատուներէ, ՓՈՐՁԱՌՈՒ Եւրոպիոյ երեւելի հիւանդանոցներու մէջ ունեցած աշխատասիրութեամբ, Պոլսաքաղաք վերադարձած լինելով, իւր բնակութիւնն հաստատած է ի Մեծ փողոց Բերայի, թիւ 447 տունը, կից Ռուսիոյ Դեսպանատան, ուր ամեն օր կ'ընդունի իրեն դիմողներն առաւօտեան ժամ 9էն մինչեւ կէսօր և կիրակիներէ զատ ամեն օր ժամ 2 է մինչեւ 5 (ը. ե.) Պոլսոյ կողմը, կամուրջի դիմաց Ֆիւզիւքեան դեղարանն, ուր չորեքշաբթի օրերը ձրի կը դարմանէ. 7179

ԴԵՂԱՐԱՆ

ԱՆԹՈՒԱՆ ՏԷՎԼԷԹԵԱՆ

Օթէլըր պաշը Թիւ 33 Սուլթան Պայազիտ

Սոյն դեղարանն որ մի քանի տարիներէ ի վեր հաստատուած և քիչ ատենուան մէջ համբաւ որ եղած էր իւր ապրանաց ընտրութեամբ և դեղագրոց խնամոք պատրաստութեամբ, վերջերս հրդեհի մը պահ եղած ըլլալով, այս անգամ աւելի ճոխ պարունակութեամբ վերաբացուած և Եւրոպայէն յատկապէս ամեն տեսակ դեղեր եւ Մօրինայի զուտ ձէթ բերուած է. Այս դեղարանին ազգ. ճարտար բժիշկներէն Տօքթ. Թիւրաթեան և Տօքթ. Թէրզեան էֆէնտիք պիտի այցելեն ամեն օր կէս օրէն վերջը և պիտի շարունակեն ըստ առաջնոյն հիւանդ դարմանել.

Տօքթ. Թէրզեան ուրբաթ օրերն աղքատ հիւանդները ձրիաբար պիտի դարմանէ.

ԳՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ ԵՆ

2275 7—10

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑՔ ԹԷՅԻ

ԷՄ. ՊԱԼԱՊԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԱԾՈՒՄՆ
Չինաստանէն, Հնդկաստանէն եւ Ճաբոնէն
12 — Պոլիս, Չէլէպի խան, — 12
Եէնի Ճամիի վաճառատանց դիմաց
ՆԵՐԱԾՈՒՄՆ—ԱՐՏԱԾՈՒՄՆ

Քանի տարիէ ի վեր Թէյի մեծաքանակ առեւտուր ընելով, դրամապէս զեկելով զայն ի Ռուսիա և Պարսկաստան, բազմաթիւ անձանց խնդրանաց վրայ որոշեցինք քաղաքիս մէջ ԹԷՅԻ կեդրոնական վաճառատուն մը հաստատել «մեծաքանակ» եւ «փոքրաքանակ» վաճառմանց համար։ Վաճառականք, դեղավաճառք, նպարավաճառք եւ ընտանիքներն, որք վերահաս ձմրան պատճառաւ իրենց պաշարը կը պատրաստեն, եւ անոնք որ կ'ուզեն ոչ միայն լաւ, հապա նաեւ «աժան» թէյ ունենալ, կը հրաւիրուին այցելել «Թէյի մեծ մթերանոցներն» եւ գոհ պիտի մնան։ 2187

Տուփերուն վրայ պահանջել Էմ. Պալապանի եւ Ընկ. ստորագրութիւնն եւ Աքաղաղի պատկերն։

Պատուաւոր երաշխաւորութեամբ հաւատարիմ վկայեալ երիտասարդ մը, քաջ անգղիագէտ և վարժ տոմարակալութեան և առեւտուրի, կը փափաքի վաճառատան մը մէջ պաշտօն մը ունենալ, և կամ այցելութեամբ անգլիերէն թղթակցութեան պաշտօն վարել.

Դիմել Արեւելքի խմբագրատունը.

2279 3—3

AUX VILLES DE FRANCE

Ժ. ՏԸԼՈՐՄ, յաջորդ Պ. ՄԷՅՖՈՒ

ԲԵՐԱ—394, Մեծ Փողոց Բերայի, — 394 ԲԵՐԱ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանել ձեզ թէ յառաջիկայ Մարտ 3/15ին, վարձակալութեան լրանալուն պատճառաւ և ինքզինքս բոլորովին նուիրելու համար Ղալաթիոյ Մահմուտիէ Փողոցի թիւ 3 վաճառատանս շահագործման, որոշած եմ ջնջել Բերայի մասնաճիւղս.

Որպէսզի կարենամ ձեռքէ հանել այդ Մասնաճիւղին մէջ եղած ապրանաց ահագին մթերքը.

Դեկտեմբեր 5/17էն մինչեւ Յունուար 1/13 պիտի կազմակերպեմ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԵՐՈՎ ՎԱՃԱՌՈՒՄ մը ամեն տեսակ կաղանդէքի առարկաներու, ինչպէս

Շաքարի ամանք, Քսակք, Ապարանջանք, Ժամացոյցք, Պղնձեայ արձաններ, Բիւրեղեայ ամաններ, փոքր կարասիք, Պէյլէքներ, Ծխողներու յատուկ առարկաներ, Լուսանկարի շրջանակներ, Հովանիք, Ժամագիրք, Ալպոմք, Պատկերներ, եւայլն. եւլն. եւլն.

Բոլոր գիները նշանակուած են ղրուշով. — ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆ. — Օսմ. ոսկին 108 ղրուշէն.

Ժ. ՏԸԼՈՐՄ ՅԱՋՈՐԴ Պ. ՄԷՅՖՈՒ
394, Մեծ Փողոց Բերայի

ԾԱՆ. — Իւրաքանչիւր գնորդ պիտի ստանայ Վիճակահանութեան ձրի տոմսակ մը, որուն բաժիններն ի տես պիտի դրուին. 2277 7—25

ՄՍԻ ՃՇՄԱՐԻՏ ՀԻՒԹ
LIEBIG

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Ի ՖՐԷՅ-ԲԷՆՏՈՍ

Որ 1867էն ի վեր արժանացած է Միջազգային ամեն ցուցահանդէսներու մէջ ամենէն բարձրագոյն վարձատրութեանց. Մեծ դիւրութիւն և խնայողութիւն. Վայրկենական պատրաստութիւն արգանակի, և ապուրի, համեմի, բանջարեղինաց համը բարեխառնելու գերընտիր միջոց.

Հիւանդաց և ապաքինելոց համար կազդուրիչ դեղ.

Պահանջել այս ստորագրութիւնը J. v. Liebig կապոյտ մելանով. 2141

Մեծաքանակ կը ծախուի գործակատարաց քով, ՆԷՆՆԻ ՔԻԼԼԷ և ընկ. Կ. Պոլիս, Թիճարէթ խան, թիւ 4. կը ծախուի նաեւ ուտեստեղէնի վաճառականներու, դեղավաճառաց, նպարավաճառներու քով և այլն.

ԻԼԱՆ

ՇԷՀՐ ԷՄԱՆԷԹԻ

Ֆինճանճըլար եօգուշունտա մէրհում Րիզա փաշա գօնաղընըն տիվարը էօնիւնտէ վէ խան իթթիսալինտէ սէքիզ արշուն պիր բարմագ թէրպիինտէ պուլունան էմանէթ մալը արսա պիլ միւզայէտէ սաթըլաճաղը վէ գարարը գաթիսի քեանունի էվվէլին օն պէշինճի բէնչշէնպիհ կիւնի վիրիլէճէկի ճիհէթլէ թալիպ օլանլարըն թէէմինաթ ագչէլէրի իլէ պէրապէր շէհր էմանէթի մէճլիսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի.

8 Քեանունի էվվէլ 304 1861

ԻԼԱՆ

ՕՐՄԱՆ ՎԷ ՄԷԱՏԻՆ ԻՏԱՐԷԻ ՈՒՄՈՒՄԻՍԻ

Պուլկար տաղը մաատէնի հիւմայունունըն 304 սէնէսի հասըլաթընտան օլարագ մէվճուտ պուլունան 52954 տիրհէմ ճէտիտ 735 քիւսիւր սիմ խալիս իլէ 397 տիրհէմ ճէտիտ 302 քիւսիւր ալթընըն միւզայէտէսի պիլ իճրա քեանունը էվվէլին 26ընճը բազար իրթէսի կիւնիւ սաաթ 9 բաւտէլէրինտէ գարարտատէսի քէշիտէ օլունմագ վէ 24 սաաթ զարֆընտա 100 տէ 5 զամմ գապուլ օլունուպ, անտէն սօնրա զամմ գապուլ օլունմամագ վէ թէգարրիւր իտէճէք լամանը հէման վի նագտէն վէ տէֆաթէն վէ լիրաի օսմանի եիւզ ղրուշա օլարագ Օրման վէ Մէատին իտարէի ումումիյեէսի վէզնէսինէ թէսլիմ օլունմագ իւզրէ մէվգիի միւզայէտէյէ վազ օլունտուղունտան, թալիպ օլանլարըն տէբօզիթօլարը իլա պէրապէր Մալիէ նէզարէթի ճէլիլէսի տայիրէսինտէ իտարէի մէզքիւրէյէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր.

10 Քեանունի էվվէլ 304 2292

AU CROISSANT ‖ Օ ԳՐՈՒԱՍԱՆ

94, Եւրոպէք Գալաթիոյ, Վոյվոտայի դիմաց, 94

ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ,

Մեծ վաճառահանդէս հանդերձեղինաց, չափազանց զեղչեալ գներով	ֆրանք
Ջմրան բալթօ, մէջը ֆանէլայով, վայելուչ ձեւ, լաւ կարուած	25
Գասմոր Բալթօ, մէջը Ֆանէլայով, չինական անդուսէ	28
Սրանց բալթօ բոլոր բուրդէ, սքանչելի ձեւ	40
Աստրագան բալթօ մէջը մետաքս կամ ֆանէլա, շատ վայելուչ	40
Բալթօ էնբէրիալ, վերջին նորաձեւութեամբ, շատ վայելուչ	32
Ֆրակ բալթօ, բոլոր բուրդէ, որ ուրիշ տեղ 60 Ֆրանքի կը ծախուի	50
Տղայոց զգեստ բալթօ 12էն 18 տարեկանի համար	18
Սրանց հաստատուն և վայելուչ բանդալոն սկսեալ	8
Բանդալոն, ճարտար և վայելուչ կարուածքով	15
Ռոպ տը Շամպր, ճիշդ արժէքովը վաճառուող, [illegible]	19
Գոստիւմ, սրտընկէզ, բոլոր բուրդէ, վայելուչ	50
Պանժուռ ժիլէ սեւ գոյն, շատ վայելուչ, բրդէ	32
Ջմրան գոստիւմ, վայելուչ և հաստատ, սկսեալ 1506	25

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. ոսկի 1,000,000 "ՖԻՆԻՔՍ" Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետերք Անգղիոյ ամենահարուստ և համբաւաւոր դրամատէրքն են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 16,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր յարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 1799

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և մեծագոյն դիւրութեամբ ստորագրելոյս, որք ունին փափոր խղճամտութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍԻՒԱՆ և ԸՆԿ. միակ գործակալք ի Պոլիս և ի Շրջակայս
Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերև։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ Ֆռանք 8,000,000
Պահեստի դրամ աւելի քան » 4,000,000
Տարեկան հասոյթ » » 7,500,000

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներու և բնակութեանց մէջ վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՌԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆռանք 6,250,000 Պահեստի դրամ Ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան 13 լաւ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 Ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Եօռկիատոխ խան.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Եւրոպեան առաջնակարգ դրամատուներ ցոյց պիտի տրուին անոնց, որք Ընկերութեանցս վերայ տեղեկանալ կը փափաքին։ 2176

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՅԱՌԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԵՐԿԻ

Ղալաթիա Պէօյիւք Միլլէթ խան, միջազգային Թղթատարատան վրայի յարկը

Սոյն վաճառատան մէջ խիստ աժան գներով կը վաճառուին ամեն տեսակ ճերմակեղէնք, կանանց համար կրկնոցներ, տղայոց համար հագուստներ, կէս հրջազգեստներ, քօսլներ, օտքի համար ճերմակեղէնք, բանուածքներ, բազմատեսակ գուլպաներ, թաշկինակներ և այլ այս տեսակ ապրանքներ։

Այս ապրանքներ, որոց ամենքն ալ լաւ տեսակէ են, կը վաճառուին թէ՛ փոքր և թէ մեծ քանակութեամբ։

Այս ապրանքներ կը պատրաստուին Վիեննայի և Պերլինի յատուկ գործարանաց մէջ։ Նոյնպէս Անգլիաէն, Իտալիաէն և եւրոպական ուրիշ երկիրներէ եւս ապրանքներ կը բերուին։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք կը կատարուին եթէ փոխարժէնը փոխանակագրով և կամ Թղթատարական դրոշմով ղրկուի։

Չը հաւնուած ապրանքները ետ կ'առնուին և ստակը ետ կը տրուի զեղչելով փոխադրութեան ծախքը։ 1180

ՎԻԱԼԻ ԳԻՆԻ

ԿԱԶԴՈՒՐԻՉ ԶՕՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ

Ամենազդու կազդուրիչն զոր պարտին գործածել Ապաքինողները, Ծերերը, Կանայք, տկարակազմ Տղաքներն և ամեն փափուկ անձինք։

Բաղկացեալ Մկանանց և Ջըղային ու Ոսկրային դրութեանց կազմութեան և զարգացման յոյժ անհրաժեշտ նիւթերով։

TRIPLEX IN UNUM: SANITAS
VIANDE
QUINA
PHOSPHATES
J. VIAL
C. GEUFFRAY

ՔԻՆԱՅՈՎ ՄՍԻ ՀԻՒԹ ՖՈՍՖԱՏ ՏԸ ՇՕ

ՎԻԱԼԻ ԳԻՆԻՆ ամենէն ազդու դեղերու միութիւնն է, ընդդէմ Արեան տկարութեան, Նեղութեան, Թոքախտի, Ստամոքսի ամեն ցաւերու, փորհարութեան, Հիւծման, երկար ապաքինմանց, ևլն. ի մի բան, Թուլութեան, Վատութեան, Ջղային ուժհատութեան ամեն վիճակներուն որոց շատեր չարաչար կերպիւ ենթակայ են մեր օրերս։

ԼԻՈՆ—Դեղարան Ժ. ՎԻԱԼ, Պուրպոն փողոց, 14—ԼԻՈՆ 199

Միակ գործակալք և ներկայացուցիչք ի Կ. Պոլիս ԷՏՈՒԱՐՏՍ և ԱԼՊԵՐՏԻ Պէրէքէթ խան, Ղալաթիա

ՉՐԱՑԻՆ ՏԱԳՆԱՊ
ԽՄԴԻՌՈՒԹ
Ս. ԳՈՒԻՏՈՆԵԱՆ ՊԱՐ, ԱՄՍՍԿԱՆԻ առեն
կանանց ջղային յուզում,
Այս ջղային զանազան վիճակներուն առաջքն առնելու
համար, կը բաւէ առնուլ օրն երկու անգամ հաւէ
մէջ մինչ երեք
մէջմանը մէկին
GELINEAU
ՇԱՔԱՐԱՀԱՏ
ՍՕ
ՄԵՐՁ Ի ԲԱՐԻԶ

Այն անձինք որ կը ճանչեն DEHAUT ՏԸՅՕԻ ԴԵՂԱՀԱՏԵՐԸ

իրենց ստամոքսը մաքրելու համար լոկ այդ դեղահատերը կը գործածեն, որք ո՛չ նողկանք եւ ո՛չ յոգնութիւն կը պատճառեն, որովհետեւ հակառակ միւս մաքրողական դեղերուն, այս դեղն այն ատեն միայն կը ներգործէ երբ լաւ կերակրոց և կազդուրիչ ըմպելեաց հետ առնուի, ինչպէս գինի, խահուէ, թէյ։ Ամեն ոք կ'ընտրէ իրեն յարմար ժամն, ըստ իւր զբաղմանց։ Դեղն յոգնութիւն չպատճառեր բնաւ. այնպէս որ մարդ սիրով կ'ուզէ գործածել։

ՄԻ՛ ԳՆԷՔ

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ ՄԸ

ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԷՍ ԱՅՑԵԼԵԼՈՒ

ՍԻՆԿԷՐ

Ամերիկեան գործարանի մթերանոցներն
Ի ՂԱԼԱԹԻԱ, Եիւքսէք Գալտըրըմ,
120

Քարաքէօյի աղբիւրին դէմ.
Ի ԲԵՐԱ, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ
Ի ՊՈԼԻՍ, Մահմուտ փաշա, 90

Ուրիշ ամեն տեղ «Սինկէրի կարի մեքենային «կեղծերը» միայն պիտի գտնէք։

Վ. ՃԱՐՄԱՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ
(Շաքաբալեան) 1761

ՀԱԶԻ, ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ, ՊՐՈՆՇԻԴԻ, ՀԱՐԲՈՒԽԻ, ՑՐՏՈՒՌԻԹԱՆ ԵՒ ՁԱՅՆԻ ԿԼՐԿԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

POWELL'S BALSAM OF ANISEED.
TRADE MARK.

ՇՆՉԱՓՈՂԻ ԵՒ ԽՌՉԱՓՈՂԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ դէմ իբր ապահով դարման այս դեղին վայելած համբաւը միշտ կը հաստատուի այն բազմաթիւ նամակներով զորս Պ. Բօուէլ կ'ստանայ անոնցմէ որք գործածած և ճանչցած են նորա յատկութիւնները։

«Անգլիոյ Թագուհւոյն ՆԷԳԼԻ Թնդանօթանաւոյն վրայ, ի Ռւիք, Սկովտիա

«Սիրելի պարոն Ըստ սովորական կը նեղուէի յամառ հազէ մը որ գիշերը կ'արգելուր ինձ քնանալ և ցերեկհանգիստ անցունել, վ. սեմ. կոմս Գարլթնէս յանձնարարեց ինձ գործածել ձեր անզուգական բալասանէն անխոնջ հատիկներով և կրնամ հաւաստել ձեզ թէ առաջին գործածութենէն իսկ զգալի բարւոքում կրեցի, առանց իսկ պէտք ունենալու գործերս դադրեցնելու, և առաջին փոքր սրուակը բոլորովին բուժեց զիս։ Ուստի անոր ազդեցութեան վրայ ունեցած մեծ վստահութեամբս կը յանձնարարեմ զայն այլոց.

(Ստր.) Վ. ԼԻՆՁԷԼ, Նէգլի Թնդանօթանաւէն.

Կը վաճառուի ամեն դեղատանց և արտօնեալ դեղերու վաճառականաց քով, շիշը 1 շիլին 1/2 բէնսի, 2 շիլին 3 բէնսի և 11 շիլինի։—Պատրաստեալ ձեռամբ ԹՈՄԱՍ ԲՕՈՒԷԼԻ, 4, Ալպիոն Բալէյս, Պլաքֆրիէրս րօտ, Լոնտոն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ և Պուլկարիոյ ներկայացուցչին քով

2167 Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

Անգլիական Ընդհանուր Մթերանոց, Վոյվոտա, պահակատեղին քով, կայարան Թրամուէյից, 95 և 97

ՄԱՏԱՄ Ս. Ա. ԱԼԼԷՆԻ

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՄԱԶ. ՆՈՐՈԳԻՉԸ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիշ ու գեղ կուտայ։ Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը։ Գլխու թեփը շուտ մը աներևոյթ կ'ընէ։ Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի։

"Մէկ շիշը կը բաւէ։" Այդ փորձը ունեցան ամենքը որոնց մոխրագունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան։ Ներկ չէ, և ամենևին զեան մը չըներ։ Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ՄԱՏԱՄ Ս. Ա. ԱԼԼԷՆԻ աշխարհահռչակ մազի նորոգիչէն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Փարիզ ու Նիւ Եօրք։ Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով։

Կը վաճառուի Փ. և Ն. Գանչիւք եղբարց Բրիտանական դեղարանը, 433 Մեծ փողոց Բերա, Խամին Գարաւանս, Ղալաթիա, Նիւսէք Գալտըրըմ 95 և 97. Բիւչիւքեան Եղբարց քով 77 Եմին Եօնիւ —, 51 Եէկի ճամի և 168 Մեծ փողոց Բերայի, և Իզմիտօրի քով Բերա Մեծ փողոց Թիւ 428. 2278

ԽԱՐԻՍԽ

ԿԵՆԱՑ եւ ԵԿԱՄՏԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Ի ՎԻԵՆՆԱ Հաստատեալ 1858 ին

1887 Դեկտեմբեր 31ին երաշխաւորեալ հասոյթն էր Ֆր. 86,699,959,12.
Ամբողջութիւն ապահովեալ գումարոց » 408,448,921,35.

Ապահովագրեալ տուող անձինք մահուան պարագային մէջ տարեկան բաժիններէն % 25 շահ կ'ընեն։

Ապահովագրեալ տուող անձինք կենաց պարագային մէջ ապահովագրեալ դրամագլուխներէն մինչեւ 41 1/2 % շահ կ'ընեն։

ԽԱՐԻՍԽ ընկերութեան կատարած գլխաւոր գործողութիւնք են.

Ա. Ապահովագրութիւն մահուան պարագային մէջ. Օրինակ.

39 տարեկան անձ մը 286 ֆրանքի տարեկան բաժին մը կը վճարէ իւր ժառանգորդաց ապահովելու համար 10,000 ֆրանքի դրամագլուխ մը, վճարելի իւր մահուանէն յետոյ և որ իրեն իրաւունք կուտայ շահուց մասնակցիլ իւր ապրած միջոցին։

Բ. Ապահովագրութիւն կենաց պարագային մէջ (Օժիտք) Օրինակ.

Մէկ տարեկան եղած միջոցին ապահովագրեալ տղայ մը քսան տարի յետոյ 10,000 ֆրանքի դրամագլուխ մը պիտի ստանայ. տալէ զատ, պիտի մասնակցի Ընկերութեան 85 % շահուց՝ 298.30 ֆրանք տարեկան բաժնոյն փոխարէն։

Մասնակցող օժտի համար ապահովագրելոց շահուց մասն եղած է վերջին երեք տարիներուն համար 37 %, 34.12 % և 41 1/2 %։ Այսպէս ապահովագրեալ 1000 ֆրանքին վրայ, 415 ֆրանքի շահաբաժին տրուած են վերջին բաշխումէն։

Քննչին մրցանակի մը միջոցաւ, կարելի է երաշխաւորել նաեւ վճարուած գումարներն, եթէ մահ պատահի։

Տեղեկութեանց համար դիմել առ ընդհ. Գործակատարն Պ. ԼԻՕՆԷԼ ՊՈՆՏԻ,
Գրասենեակք, Թիւնէլի հրապարակ, տուն Մայէրի, երկրորդ յարկ

Ընկերութեան սեղանաւորն է Պ. Ս. ԱՏԼԷՐ 1819

ՄՈՐԳԱԿԱՆ ՆԵՐԿ

Նոր գիւտ մ'է այս մազերուն գոյնը փոխելու համար մէկ երկու անգամէն, առանց ուրիշ ... է նիւթի գործածութեան կամ լուացքի։

ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՍԵՒԻ

Այս նոր ներկը բաղկացեալ է միայն արմատներու և խոտերու նիւթէ։ Սպիտակ կամ կարմիր մազերն անմիջապէս կը փոխուին պայծառ շագանակագոյնի կամ թանձր սեւի։

Փորձը ցոյց տուած է թէ այս ներկն ո՛րչափ գերազանց է նմանօրինակ ուրիշ պատրաստութիւններէ։ Իր առաւելութիւնն է մազերուն ամենէն բնական երևոյթը տալ և ամենէն ուշադիր գիտողն ի զեր հանելու։ Կը կասեցնէ ներաց անկումը, գլուխը կը մաքրէ, թեփը կ'անհետացնէ և նոր ոյժ կուտայ մազային մարմին։ Ուշադրութեամբ կարդալ

ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Սրուակը երերցնել գործածելէ առաջ և փոքր քանակութեամբ հեղուկէն դնել սկաւառակի մը մէջ, յետոյ բարակ աղտիկ սանտրով մը կամ այդ հեղուկին մէջ թրջած ըսպունգով մը թեթև կերպով մազերուն վրայ անցունել զայն, այնպէս որ ամբողջ մազերը թրջին։ Այս գլուխը բաց պահել մինչեւ որ հեղուկը չորնայ։ Բոլոր մազերը մէկ չըլլալով, ոմանք մէկ երկու գործածութեան պէտք ունին, այլոց համար մէկ անգամը բաւ է։ Նմէ մէկ երկու անգամէն աւելի գործածուի, գոյնն աւելի թուխ կ'ըլլայ։ Անգամ մը որ ուզուած գոյնը ձեռք բերուած է, զայն տարիներով պահելու համար կը բաւէ երեք չորս շաբաթն անգամ մը հեղուկէն գործածել։ Նոյն եղանակը գործածելու է մօրուքին և պեխերուն համար։ Պէտք չկայ գլուխը լուալ գործողութենէն առաջ կամ ետքը։ Բնականաբար վերջէն գէթ և ձեռները լուալու է ...։

ԾԱՆ. Եթէ ուզուած գոյնը ձեռք չբերուի մէկ երկու գործողութենէ ետք, գլուխը լուալու է քիչ մը աղօղով, առաջ գլխուն քսելու է այդ ներկին մէջ թեթևակիս թըրջած ... մը, և ուզուած ազդեցութիւնն յառաջ կուգայ անմիջապէս։

ԿԵՂԾԵՐԷՆ ԶԳՈՒՇԱՆԱԼ

Միակ կեդրոնատեղի ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ, Վոյվոտա, Պահակատեղին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 2166

ՄԻԱԿ ՄԹԵՐԱՆՈՑ ԳԱԼՈՐԻՖԷՐՆԵՐՈՒ



ՌԻՒԹ ԿԼԻՊԻՒՐՁ
ՎԻԵՆՆԱ

Հ. ԼԱՆԺ

24, Բեյլէմէ դուռը, 32, Մահմուտիէ ճուղը

ՎԱՌԱՐԱՆՔ ԵՒ ԽՈՀԱՆՈՑՔ
Նորօգութեան առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ՉՄԻՆԷՆԵՐ
Կրակարանի վերաբերեալ մանր առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ԳՈՐԾԻՆԵՐ
(Պղնձէ, ձուլածոյ և թիթեղէ երկաթէ)

ԵՐԿԱԹԵԱՑ ՄԱՆՐ ԳՈՐԾԻՔ
Ամեն տեսակ գործիք—Շինուած անխէժք

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՔ
Տատանոցք-Կշռորդք-Ցորենի կշռորդ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԱՆԱԿՆԵՐ

ԺՈՒԽ ՀԱՒԱՔԱԾՈՅ ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ



ՅԱԽՃԱՊԱԿԻ, ԹԱՓՕՐԻԿ ԷՆ.

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 676

NUBIAN
BLACKING
Produces a
POLISH
without
Brushing
Equal to
PATENT
LEATHER
On BOOTS, SHOES
And
LEATHER GOODS
NUBIAN
IS WATERPROOF.

ՆՈՒՊԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Խիստ յարմար է ներկելու համար կօշիկներն որք առաջին անգամէն կը փայլին, առանց խոզանակելու պէտք ունենալու։ Այս փայլը, որ նման՝ ... պայծառութիւն մ'ունի, ամբողջ շաբաթ մը կը տևէ։ Կօշիկներն անթափանցելի կ'ընէ ջուրի և խոնաւութեան։ Տիղմը կամ ուրիշ աղտեղութիւնները դիւրաւ կը վերցուին թրջած լաթով մը, առանց փճացնելու կին փայլը կամ գոյնը։

Այս ներկը կը յարմարի արանց և կանանց ամեն տեսակ կօշիկներու, կարելի է գործածել զայն՝ նորոգելու համար ճամբորդութեան կաշիէ անօթները։

Գործածման եղանակ. Ներկելի առարկայն խնամով սրբել, այնպէս որ հին ներկէն հետք չմնայ։ Ապա փայլուն հեղուկէն քսել, կա՛մ սպունգի կտորով մը կա՛մ վրձինով։ Թրջուած մասերն ինքնին կը չորնայ։

Զգուշանալ կեղծերէն.

Ընդհանուր կեդրոնատեղին է ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վոյվոտա, Պահակատեղին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 2169

Արտօնատէր Օ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ